

ԿԱՆԱՏՅ ՀԱՄԱՐ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՁԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏԵՐԸ, ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱԶՈՂԿԱԾ ՓՈՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Պատրաստվել է «Արևելյան Գործընկերության հիսգ պետություններում կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման» (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա) ծրագրային համագործակցության շրջանակային ծրագրի ներքո

Partnership for Good Governance

Գործընկերություն հանուն լավ կառավարման



EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

**ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ,
ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ՀԱԶՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Պատրաստվել է «Արևելյան
Գործընկերության հինգ պետություններում կանանց
համար արդարադատության մատչելիության
բարելավման» (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան,
Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա)
ծրագրային համագործակցության
շրջանակային ծրագրի ներքո**

«Կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտները, լուծումները եվ հաջողված փորձը Հայաստանում» խորագրով սույն ազգային ուսումնասիրությունը պատրաստել է Գայանե Մակարյանը: Աշխատանքում արտացոլված կարծիքների պատասխանատուն հեղինակն է, և դրանք կարող են չարտացոլել Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության պաշտոնական քաղաքականությունը: Այս փաստաթղթում տեղ գտած տեղեկություններն արդիական են 2017 թվականի փետրվարի դրությամբ:

Այս փաստաթղթի կամ դրա որևէ մասի արտատպման կամ թարգմանության վերաբերյալ հարցումներն անհրաժեշտ է ուղարկել հետևյալ հասցեով. Directorate of Communication (F-67075 Strasbourg Cedex, կամ էլ-փոստով՝ publishing@coe.int): Սույն հրապարակմանն առնչվող ցանկացած այլ նամակ պետք է ուղարկել հետևյալ հասցեով.

Equality Division of the Directorate General of Democracy:

Սույն ուսումնասիրության պատվիրատուն է Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության գլխավոր տնօրինության Հավասարության բաժնի Գեներալի հավասարության ենթաբաժինը, ֆինանսավորողները՝ Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը:

Կազմը և ձևավորումը. Եվրոպայի խորհրդի Փաստաթղթերի և հրապարակումների պատրաստման վարչություն

© Եվրոպայի խորհուրդ, օգոստոս 2017 թ. Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ՀԻՆԳ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	5
ՀԱՅԱՍՏԱՆ	10
1. ՀԱՄԱՈՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	10
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	10
2. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՑԵՐԸ	14
Իրավակարգավորման ազգային համակարգը և քաղաքականությունները	14
Կանանց համար արդարադատության մատչելիության վրա ազդող սոցիալ-տնտեսական և մշակութային խոչընդոտները	20
Պայքարը գենդերային կարծրատիպերի դեմ	21
3. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	24
Գենդերային հավասարակշռությունը դատական համակարգում	26
4. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	27
Կանանց համար արդարադատության հավասար մատչելիության ապահովման հաջողված ներպետական փորձի օրինակներ	27
Կանանց համար արդարադատության մատչելիության բարձրացման առկա մեխանիզմները	28
Կանանց համար արդարադատության հավասար մատչելիությունը խոչընդոտող հանգամանքների հաղթահարման վերաբերյալ առաջարկություններ	31
Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման գործընթացում կարևորագույն սուբյեկտների դերերի քարտեզագրում	33
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	35
ՀԱՎԵԼՎԱԾ	37
Հայաստանում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտների, իրավական պաշտպանության մեխանիզմների և հաջողված փորձի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուսումնասիրություն	37

ՀԻՆԳ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարևոր ջանքեր են գործադրվել թե՛ Եվրոպայի խորհրդի, թե՛ անդամ պետությունների մակարդակով գենդերային հավասարության չափանիշներն ամրապնդելու ուղղությամբ: Եվրոպայի խորհրդի գենդերահավասարության չափանիշների հիմքում ընկած են չորս կարևորագույն համաձայնագրեր: Դրանց թվում են «հիմնարար» երկու համաձայնագրեր՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Եվրոպական (վերանայված) սոցիալական խարտիան, և «նոր սերնդի» երկու համաձայնագրեր՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին կոնվենցիան¹ և Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին կոնվենցիան (Ստամբուլյան կոնվենցիա):² Գենդերահավասարության թեմաների նվիրված մի շարք հանձնարարականներ են ընդունվել Նախարարների կոմիտեի կողմից սկսած 1970-ականներից:³

Եվրոպայի խորհրդի Գենդերահավասարության առաջին՝ 2014-2017 թթ. ռազմավարությամբ⁴ նախատեսվում է ռազմավարական հայեցակարգ, որով այդ չափանիշների ներդրումը կաջակցի անդամ պետություններում փաստացի գենդերահավասարության ապահովմանը: Եվրոպայի խորհրդի Գենդերահավասարության ռազմավարության հինգ նպատակներից մեկն է աշխատել անդամ պետությունների հետ՝ կանանց համար արդարադատության հավասար մատչելիությունը երաշխավորելու ուղղությամբ: Ռազմավարությամբ նախատեսվում է, որ այդ ոլորտում գործողությունների նպատակը պետք է լինի վերլուծել տվյալների հավաքման ազգային և միջազգային համակարգերը, բացահայտել ազգային դատարանների և միջազգային արդարադատության մատչելիության ճանապարհին կանանց հանդիպող խոչընդոտները, կանանց համար արդարադատության մատչելիությանն օգնելու նպատակով տեղեկություններ գտնել, հավաքագրել և տարածել իրավական պաշտպանության առկա լուծումների՝ միջոցների և հաջողված փորձի օրինակների վերաբերյալ, և ներկայացնել իրավիճակի բարելավմանը միտված հանձնարարականներ:

Արևելյան գործընկերության հինգ պետություններում (Հայաստան, Ադրբեջան, Կրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա) կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման տարածաշրջանային ծրագիրն աջակցում է Գենդերահավասարության ռազմավարության իրագործմանը և մասնավորապես Ռազմավարության 3-րդ նպատակի իրագործմանը, այն է՝ կանանց համար արդարադատության հավասար մատչելիության երաշխավորումը: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպայի խորհրդի/Եվրոպական միության Արևելյան գործընկերության 2015-2017 թթ. ծրագրային համագործակցության շրջանակի⁵ ներքո և ի կատար է ածվում Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության ենթաբաժնի կողմից:

Ծրագրի հիմնական նպատակներն են.

- 1 Ուժի մեջ է մտել 2008 թվականի փետրվարի 1-ին:
- 2 Ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 1-ին:
- 3 Տե՛ս գենդերահավասարության և կանանց իրավունքների թեմայով Եվրոպայի խորհրդի հիմնական չափանիշների փաստաթերթը, որն առկա է համացանցում հետևյալ հղմամբ. <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168058feef>, դիտվել է 2016 թվականի նոյեմբերի 28-ին:
- 4 Առկա է համացանցում հետևյալ հղմամբ. <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680590174>, դիտվել է 2016 թվականի նոյեմբերի 28-ին:
- 5 Տե՛ս <http://pjp-eu.coe.int/en/web/eap-pcf/home?desktop=true>, դիտվել է 2016 թվականի նոյեմբերի 28-ին:

- Պարզել կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտները և օժանդակել դրանց վերացմանը,
- Չարգացնել Արևելյան գործընկերության պետությունների կարողությունները՝ մշակելու միջոցառումներ, որոնցով կապահովվի արդարադատության գործընթացի գենդերազգայուն լինելը, մասնավորապես՝ իրավաբանական մասնագետների վերապատրաստման միջոցով:

Թեպետ գիտելիքի մակարդակն ավելացել է, դեռևս համակարգային բացեր կան կանանց համար արդարադատության մատչելիության տարբեր բաղադրիչներին առնչվող տվյալների հավաքման մեջ: Ծրագրի շահառու պետությունների մասով այդ բացերը լրացնելու համար Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության ենթաբաժինը պատվիրել է հինգ ազգային ուսումնասիրություններ՝ քարտեզագրելու համար կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտները, լուծումները և հաջողված փորձն Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում: Այդ ուսումնասիրությունները նպատակ են հետապնդել ներկայացնել.

- Կանանց համար արդարադատության մատչելիության հիմնական՝ իրավական, դատավարական, սոցիալ-տնտեսական և մշակութային խոչընդոտների վերլուծություն,
- Կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման մի շարք առաջարկություններ ըստ առանձին պետությունների՝ ներառյալ հաջողված փորձի օրինակներ, եթե այդպիսիք կան,
- Իրավաբանական մասնագետների (դատավորներ, դատախազներ, փաստաբաններ և թերևս իրավապահ մարմիններում ծառայողներ) համար հետագա վերապատրաստումների կազմակերպման համար անհրաժեշտ օժանդակ տեղեկություններ:

Ուսումնասիրություններն իրականացվել են ազգային հինգ անկախ փորձագետների կողմից, ում առաջարկվել է պատասխանել հետևյալ հարցերին.

- Որո՞նք են արդարադատության մատչելիության գենդերային բացերը Ձեր երկրում:
- Որքա՞նով է արդարադատության համակարգն արձագանքում կանանց կարիքներին:
- Ի՞նչ կարելի է անել արդարադատության համակարգի գենդերային արձագանքողականությունը բարելավելու համար:

Բոլոր հինգ ուսումնասիրությունները կառուցված են նույնանման թեմաների և հիմնահարցերի շուրջ: Յուրաքանչյուր ուսումնասիրության առաջին մասն անդրադառնում է արդարադատության մատչելիության գենդերային բացերին՝ վերլուծելով օրենսդրական և քաղաքականության դաշտը, ինչպես նաև՝ կատարման պրակտիկան և մեխանիզմները, որոնք ազդում են կանանց համար արդարադատության մատչելիության վրա: Կանանց համար արդարադատության մատչելիության սոցիալ-տնտեսական և մշակութային խոչընդոտները նույնպես քննարկվում են առաջին մասում: Յուրաքանչյուր ուսումնասիրության երկրորդ մասում ուսումնասիրվում է տվյալ երկրում արդարադատության համակարգի գենդերային արձագանքողականությունը: Բոլոր հինգ ուսումնասիրություններն անդրադառնում են հետևյալ հարցերին. կանանց համար դատարանների մատչելիությունը, դատարան դիմողների վերաբերյալ տվյալների՝ ըստ սեռերի ներկայացուցիչների թվաքանակի բացվածքի առկայությունը, գենդերային կարծրատիպերն իրավաբանական մասնագետների շրջանում հատկապես դատական համակարգում, և գենդերային հավասարության թեմայով դասընթացների առկայությունն իրավաբանական մասնագետների սկզբնական և հետագա կրթության և ուսուցման ծրագրերում: Յուրաքանչյուր ուսումնասիրության երրորդ մասում ներկայացված են առկա լուծումները և հաջողված փորձի օրինակներ, և ձևակերպված են որոշակի հանձնարարականներ: Համապատասխան դեպքերում, ընդհանուր այդ թեմաներին և հիմնահարցերին անդրադառնալու շրջանակում հնարավորինս ուշադրություն է դարձվում խոցելի խմբերը ներկայացնող կանանց (օրինակ՝ գյուղաբնակ կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց, էթնիկ փոքրամասնություններ ներկայացնող կանանց, բնությունից տուժած կանանց, լեզբուհիների, երկսեռ անձանց

և տրանս-կանանց, և ազատագրված վայրերում/բանտերում պահվող կանանց) վրա ազդեցություն ունեցող խոչընդոտներին:

Հինգ ուսումնասիրությունների համար անհրաժեշտ հետազոտությունները հիմնականում կատարվել են գրասենյակային պայմաններում, և ազգային խորհրդատուները հնավորինս լայն ընտրանք են վերցրել գոյություն ունեցող աղբյուրներից: Հայաստանում և Ադրբեջանում խորհրդատուներն սահմանափակ թվով հարցազրույցներ են իրականացրել իրավաբանների և քաղաքացիական հասարակությունը ներկայացնող իրավապաշտպանների հետ: Վրաստանում և Մոլդովայի Հանրապետությունում խորհրդատուները պաշտոնական տվյալներ են խնդրել մի շարք հաստատություններից: Ուկրաինայում ազգային խորհրդատուն փոքր հարցում է անցկացրել դատավորների շրջանում հիմնվելով նախապես կազմված հարցաշարի վրա: Հինգ ուսումնասիրությունների նախնական արդյունքները ներկայացվել են Արևելյան Գործընկերության հինգ պետություններում կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման թեմայով տարածաշրջանային խորհրդաժողովին, որն անցկացվել է Վրաստանի Կվարեյի քաղաքում 2015 թվականի նոյեմբերի 5-ին և 6-ին: Կառավարական պաշտոնյաներից, գիտական փորձագետներից և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից խորհրդաժողովի ընթացքում ստացված արձագանքը ներառվել է ուսումնասիրությունների մեջ: Ավելին, յուրաքանչյուր խորհրդատու իր երկրում կատարված ուսումնասիրության արդյունքները ներկայացրել է ազգային լսարանին 2016-ի առաջին ամիսների ընթացքում: Տվյալների իսկության հաստատման նպատակով գումարված այդ հանդիպումներում ստացված արձագանքը նույնպես ներառվել է ուսումնասիրությունների վերջնական տարբերակների մեջ:

Ուսումնասիրություններով պարզվել է, որ չնայած ձեռք բերված առաջընթացին՝ հատկապես օրենքների և քաղաքականությունների ընդունման առումով, կանանց համար արդարադատության մատչելիության առումով դեռևս առկա են լուրջ բացեր:

Ինչ վերաբերում է իրավական և քաղաքականության դաշտին, Արևելյան Գործընկերության պետությունները զգալի առաջընթաց են ձեռք բերել գենդերային հավասարության ամրապնդմանն ուղղված օրենքներ և քաղաքականություններ ընդունելու հարցում: Կանանց և տղամարդկանց միջև հավասարության երաշխիքները ներառված են մասնակցող պետություններից յուրաքանչյուր սահմանադրությունում. վերջերս դրանք ներառվեցին նաև Հայաստանի փոփոխված Սահմանադրության մեջ: Բոլոր հինգ պետություններն առանձին օրենք ունեն գենդերային հավասարության մասին. Ադրբեջանում այդ օրենքն ընդունվել է 2006-ին, Հայաստանում 2011-ին, Վրաստանում 2010-ին, Մոլդովայի Հանրապետությունում 2006-ին, իսկ Ուկրաինայում 2005-ին: Խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենքներ են ընդունվել Վրաստանում (2014 թ.), Մոլդովայի Հանրապետությունում (2012 թ.) և Ուկրաինայում (2012 թ.): Խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենքներ չկա Ադրբեջանում, թեպետ 2010 թվականին ընդունվել է առանձին օրենք ընտանեկան բռնության մասին: Բացի դրանից, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում ընդունվել են առանձին օրենքներ ընտանեկան բռնության մասին (համապատասխանաբար 2006, 2007 և 2001 թվականներին): Հայաստանը ներկայումս պատրաստում է խտրականության դեմ պայքարի մասին օրենք և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին օրենք:

2017 թվականի փետրվարի դրությամբ շահառու պետություններից երեքը՝ Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինան, ստորագրել, սակայն դեռ չեն վավերացրել Ստամբուլյան կոնվենցիան: Մյուս երկու պետությունները դեռ չեն ստորագրել Ստամբուլյան կոնվենցիան:

Չնայած նշանակալից օրենսդրական գործընթացին, դեռևս պահպանվում են կանանց համար արդարադատության մատչելիության իրավական խոչընդոտները: Կոնկրետ խոչընդոտներից են կանանց նկատմամբ դե-յուրե խտրականությունը կամ խտրականության դեմ պայքարի օրենսդրական դաշտի բացերը: Ազգային ուսումնասիրություններում ներկայացվում են հինգ պետություններից յուրաքանչյուրում պաշտպանող ազգային օրենսդրության խտրական հետևանքների բազմաթիվ օրինակներ: Լրացուցիչ խոչընդոտներ են նկատվել աշխատանքային օրենսդրության բնագավառում ներառյալ հղի կանանց ապօրինաբար աշխատանքից ազատելը կամ հայրերի համար ծնողական արձակուրդի հասանելիության սահմանափակումները:

Ինչ վերաբերում է կատարման պրակտիկային և մեխանիզմներին, ապա ուսումնասիրություններով պարզվել է, որ թեպետ ազգային օրենքներով երաշխավորվում է սեռերի հավասարությունը, կանայք հազվադեպ են իրենց իրավունքների պաշտպանության համար դատական կարգով պահանջում կիրառել այդ օրենքները: Անուղղակի խտրականության ապացուցման համար անհրաժեշտ՝ ապացուցման չափանիշները և իրավական մեխանիզմները բավականաչափ կայացած չեն, թեպետ կարելի է պնդել, որ դա գենդերային անհավասարության առավել տարածված դրսևորումն է: Ուսումնասիրված բոլոր պետություններում պահպանվում են գենդերահեն բռնությունից տուժած կանանց համար արդարադատության մատչելիության բացերը, մասնավորապես՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը չքրեականացնելը, կանանց նկատմամբ բռնության հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների զգալի մասի չներկայացումը, բռնաբարության համար խիստ սակավաթիվ մեղադրական դատավճիռների արձակումը և տուժողների համար օժանդակության ծառայությունների պետական ֆինանսավորման անբավարարությունը կամ բացակայությունը:

Ուսումնասիրություններով բացահայտվել են նաև կանանց համար արդարադատության մատչելիության մի շարք ընդհանուր սոցիալ-տնտեսական և մշակութային խոչընդոտներ: Լրջագույն խոչընդոտ է կանանց տնտեսական կախվածությունը տղամարդկանցից կամ տղամարդկանց հետ կանանց տնտեսական անհավասարությունը, որը նշանակում է, որ նրանց համար ավելի քիչ են հասանելի այն ռեսուրսները, որոնք հաճախ անհրաժեշտ են իրավական վարույթների համար: Ի լրումն կանանց զբաղվածության ավելի ցածր ցուցանիշներին և գործարար հատվածում աշխատողի կամ ձեռնարկատիրոջ կարգավիճակով զգալիորեն ավելի ցածր մասնակցությանը, աշխատավարձի և եկամուտների զգալի գենդերային ճեղքվածք գոյություն ունի ուսումնասիրված բոլոր հինգ պետություններում: Երկրորդը, պահպանվում են կանանց նկատմամբ տղամարդկանց գերակա լինելու վերաբերյալ հայրապետական դիրքորոշումները և համոզմունքները, և շարունակում են բնական համարվել գենդերային անջատ դերերը, որոնց պարագայում կանայք հիմնականում դիտարկվում են որպես խնամատարներ, իսկ տղամարդիկ՝ որպես ապրուստ հայթայթողներ: Տղամարդկանց գերակա լինելու վերաբերյալ համոզմունքն է ընկած միևնույն շարունակվող՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման պրակտիկայի և հղիության ընտրողական հարկադիր ընդհատումների պրակտիկայի հիմքում, որոնց անդրադարձել են Հայաստանին, Ադրբեյջանին և Վրաստանին վերաբերող ուսումնասիրությունները. դրանց հետևանքով աղճատվում է սեռերի թվային հարաբերակցությունը՝ հօգուտ տղամարդկանց, որը նաև կանանց իրավունքների ծանրագույն խախտում է: Գենդերահեն նույն դիրքորոշումներն են ընկած նաև հինգ պետություններում ընտանեկան բռնության նկատմամբ հասարակական բարձր հանդուրժողության կամ անգամ արդարացնող մոտեցումների հիմքում: Երրորդը, տեղեկատվության անբավարար հասանելիությունը լուրջ խոչընդոտ է, հատկապես գյուղական բնակավայրերում ապրող կանանց շրջանում:

Ուսումնասիրությունները հարուստ տեղեկություններ են տալիս հինգ պետություններում արդարադատության համակարգերի սահմանափակ գենդերային արձագանքողունակության մասին: Խիստ սահմանափակ է դատական որոշումներում միջազգային չափանիշների կիրառությունը: Պետություններից մի քանիսում կանայք զգալիորեն թերներկայացված են դատական համակարգում: Գենդերային կարծրատիպերը պահպանվում են արդարադատության համակարգում բարդանալով որոշակի այլ կարծրատիպերի համակցությամբ, որոնք կապված են տարիքի, ազգության կամ սոցիալական կարգավիճակի հետ: Ազգային ուսումնասիրությունները պարունակում են նման կարծրատիպերի օրինակներ, որոնք հատկապես բացասաբար են ազդում գենդերահեն բռնության հետ առերեսվող կանանց վրա:

Ուսումնասիրություններով բացահայտվել են նաև հաջողված փորձի մի շարք օրինակներ: Հայաստանում, մասնավորապես, դատական համակարգում գենդերային հավասարության և գենդերային հավասարակշռության խթանման գործողությունների ծրագիր է ընդունվել դատական համակարգի ինքնակառավարման մարմնի (Հայաստանի Դատարանների նախագահների խորհրդի) կողմից 2015 թվականին: Այն ներառում է տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ գենդերային հավասարության վերապատրաստման նյութերի և թեմատիկ վերապատրաստման ծրագրերի մշակումը: Վրաստանում և Մոլդովայի Հանրապետությունում ստեղծված՝ հավասարության մարմիններն արդյունավետ մեխանիզմներ են առաջարկում սեռահեն խտրականության

դեմ պայքարի համար: 2013 թվականից ի վեր Վրաստանի Հանրային պաշտպանի գրասենյակում գործում է Գենդերահավասարության հատուկ վարչություն, որը մշտադիտարկում է գենդերին առնչվող օրենսդրության և քաղաքականությունների իրագործումը, ուսումնասիրում է սեռի և գենդերի հիման վրա մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները և առանձին դեպքերը: Այն նաև հանրության իրազեկման աշխատանքներ և վերապատրաստումներ է իրականացնում, տվյալներ հավաքում կանանց նկատմամբ բռնության կանխարգելման՝ պաշտպանական մեխանիզմների արդյունավետությունը մշտադիտարկելու համար, և կազմում տարեկան զեկույցներ: Ադրբեջանում մայրության արձակուրդի կապակցությամբ օրենքում հաշվի են առնվում գյուղաբնակ կանանց կարիքները: Գյուղատնտեսության ոլորտում աշխատող կանանց հասանելիք մայրության արձակուրդի տևողությունն ավելի երկար է՝ ծննդաբերության պահից սկսած 70 օրացուցային օրից մինչև 110 օրացուցային օր բազմակի ծնունդների դեպքում: Մոլդովայի Հանրապետությունում խտրականության դեմ պայքարի մասին 2013 թվականի օրենքով որպես անկախ մարմին ստեղծված՝ Հավասարության խորհուրդը քննում է անհատական բողոքները՝ ներառյալ սեռահեն խտրականության վերաբերյալ բողոքները: Այն նաև վերլուծում է օրենսդրական նախագծերի համապատասխանությունը խտրականության դեմ պայքարի օրենսդրական նորմերին և խտրականության հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացման աշխատանքներ իրականացնում: Ուկրաինայի Մարդու իրավունքների 2015-2020 թթ. գործողությունների ազգային ծրագրում ներկայացված է մարդու իրավունքներին առնչվող քաղաքականության հաջողված փորձի օրինակ, որը պարունակում է գենդերային հավասարությանը վերաբերող բազմաթիվ դրույթներ, որոնք էապես համահունչ են Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության ռազմավարության գերակա ուղղություններին: Քաղաքացիական հասարակության մի շարք նախաձեռնություններ (օրինակ՝ Ուկրաինայի կանանց կոնսորցիումի ստեղծած՝ կանանց տրամադրվող Վիրտուալ իրավաբանական օգնության առցանց ծառայությունը), ինչպես նաև կանանց կազմակերպությունների կողմից գենդերահեն բռնությունից տուժող կանանց տրամադրվող օժանդակության մասնագիտացված ծառայությունները ցույց են տալիս, որ քաղաքացիական հասարակության մասնագիտական գիտելիքները և փորձը կարևոր ռեսուրսներ են կանանց համար արդարադատության մատչելիությունը բարելավելու համար:

Արդարադատության մատչելիությունը հույժ կարևոր է իրավունքի գերակայության և մարդու իրավունքների իրականացման համար: Այն նաև սոցիալական ներառման կարևոր նախապայման է և արդյունավետորեն գործող ժողովրդավարության անքակտելի բաղադրիչ: Արդարադատության իրավունքի եռլայն, իրականացման և իրացման բուն եռլայնը կախված է հավասարության՝ ներառյալ գենդերային հավասարության պահանջների ապահովումից: Մտում է հուսալ, որ հինգ ազգային ուսումնասիրությունները կաջակցեն կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման գործիքների հետագա կատարելագործմանը: Մասնավորապես, ազգային ուսումնասիրություններից ստացվող տեղեկություններն օգտագործվելու են կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման թեմայով դատավորների և դատախազների համար վերապատրաստման ձեռնարկ պատրաստելու նպատակով, որը կօգտագործվի դատական համակարգում վերապատրաստում իրականացնող կառույցների կողմից ծրագրի շահառու հանդիսացող հինգ պետություններում:

1. ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրությունը պատրաստվել է Եվրոպայի խորհրդի նախաձեռնությամբ՝ «Արևելյան Գործընկերության պետություններում կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման» տարածաշրջանային ծրագրի շրջանակում: Ուսումնասիրության հիմքում ընկած է փաստաթղթերի վերլուծությունը, որն անդրադարձել է Հայաստանում կանանց համար արդարադատության մատչելիության ոլորտում գործող ազգային և միջազգային նորմերին, քաղաքականության փաստաթղթերին, ռազմավարություններին և աշխատանքային փաստաթղթերին: Վերլուծվել են ներպետական օրենսդրության և կարգավորման դաշտը և քաղաքականությունները՝ նպատակ ունենալով պարզել Հայաստանում արդարադատության հասնելու ճանապարհին կանանց առջև ծառայող խոչընդոտները: Ուսումնասիրությունն անդրադառնում է գենդերային բացերին և ներկայացնում գործող օրենսդրության սահմանափակ կիրառությամբ պայմանավորված՝ առավել տարածված մարտահրավերները: Ավելին, ուսումնասիրությունը կենտրոնանում է մի շարք սուբ հիմնախնդիրների ուղղությամբ, ինչպիսիք են կանանց համար արդարադատության մատչելիության վրա ազդող՝ իրավաբանական օգնության հասանելիությունը, գենդերային կարծրատիպերը և սոցիալ-տնտեսական և մշակութային խոչընդոտները: Այդ խոչընդոտները քննարկվում են մասնավորապես ընտանեկան բռնության կապակցությամբ: Ստացվել են նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարծիքները՝ նրանց ուղարկելով հարցաշար (տե՛ս Հավելվածը): Մտնում է հուսալ, որ քաղաքականության տարբեր սուբյեկտները և ազգային շահակիցները կքաջալերվեն, որպեսզի միջոցներ ձեռնարկեն կանանց համար արդարադատության մատչելիությունն ապահովելու և նմանաբնույթ նախաձեռնություններին լրացուցիչ օժանդակություն ցուցաբերելու ուղղությամբ: Այս ոլորտը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ և կարիք ունի լրացուցիչ ուշադրության և օրենսդրական և քաղաքականության նախաձեռնությունների: Հնարավոր է, որ գոյություն ունեն կանանց համար արդարադատության մատչելիության բարելավման նոր՝ դեռևս չբացահայտված մեթոդներ ևս:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության մատչելիությունն իրավական և ժողովրդավարական պետության կարևոր բաղադրիչ է, որից բխում է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, դատարանների հավասար մատչելիությունը, դատարանների մատչելիությունը բարելավող՝ իրավաբանական օգնության մեխանիզմները, և իրավաբանական ներկայացուցչությունը՝ օրենքի արդյունավետ կատարումը և անհատների կողմից իրավունքների գործնական իրականացումը երաշխավորելու նպատակով: Արդարադատության մատչելիությունը «վերաբերում է իրավունքի խախտման համար պատշաճ փոխհատուցում ստանալու տարբեր տարրերին» (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, 2015 թ.): Դրա կենտրոնում հավասարության՝ ներառյալ գենդերային հավասարության պահանջն է, ինչպես նաև՝ արդարադատության իրավունքի իրականացումը և իրացումը: Կանանց իրավունքները և նրանց համար արդարադատության լիարժեք և արդյունավետ մատչելիությունն

արդարադատության ընդհանուր համակարգի կարևորագույն բաղադրիչներ են, որոնք պետք է բացառեն ցանկացած խտրականություն:

Կանանց համար արդարադատության մատչելիության իրավունքի ամբողջական սահմանում է տրված Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովի՝ Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ թիվ 33 (2015) ընդհանուր հանձնարարականում, որի համաձայն կանանց համար արդարադատության մատչելիության իրավունքն հույժ կարևոր նախադրյալ է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով (CEDAW) պաշտպանված բոլոր իրավունքների իրականացման համար: Այն իրավունքի գերակայության և բարեխիղճ կառավարման հիմնարար բաղադրիչ է՝ դատական իշխանության անկախության, անկողմնակալության, օրինավորության և վստահելիության, անպատժելիության և կոռուպցիայի դեմ պայքարի, դատական համակարգում կանանց հավասար պաշտպանության և օրենքների կատարման համարժեքմեխանիզմների հետմեկտեղ: Արդարադատության մատչելիության իրավունքը բազմաբաղադրիչ է և ներառում է դատելիությունը, առկայությունը, մատչելիությունը, արդարադատության համակարգերի բարձր որակը և հաշվետվողականությունը, և տուժողներին իրավական պաշտպանության միջոցների ապահովումը (Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով, 2015b):

Գենդերային հավասարությունը մարդու իրավունքների հիմնարար սկզբունք է, և կանանց իրավունքները մարդու համընդհանուր իրավունքների անօտարելի, անքակտելի և անբաժանելի մաս են, որոնց ապահովումը պարտադիր նախապայման է սոցիալական արդարության, ժողովրդավարության և տնտեսական զարգացման հասնելու համար (Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե, 2007, պարբ. 1): Եվրոպայի խորհրդի գենդերահավասարության չափանիշների հիմքում ընկած են չորս կարևորագույն համաձայնագրեր, որոնք վերաբերում են կանանց համար արդարադատության հավասար մատչելիությանը: Դրանց թվում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Եվրոպական (վերանայված) սոցիալական խարտիան, և «Նոր սերնդի» երկու համաձայնագրեր՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին կոնվենցիան (ուժի մեջ է մտել 2008 թվականի փետրվարի 1-ին) և Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին կոնվենցիան (Ստամբուլյան կոնվենցիա, ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 1-ին):

Ստամբուլյան կոնվենցիան ներառում է բազմաթիվ դրույթներ, որոնք ուղղված են բռնությունից տուժած անձանց համար արդարադատության մատչելիության ապահովմանը, մասնավորապես՝ Մասնակից պետություններից պահանջելով հետևյալը.

- Տրամադրել համարժեք իրավական տեղեկություններ (հոդված 19),
- Խրախուսել հաշվետվությունների ներկայացումը (հոդված 27),
- Տուժողներին տրամադրել պաշտպանության քաղաքացիաիրավական միջոցներ (հոդված 29),
- Տուժողներին տրամադրել հատուցում (հոդված 30),
- Քրեականացնել կամ այլ կերպ պատժելի դարձնել կանանց նկատմամբ բռնության տարաբնույթ ձևերը (հոդվածներ 33-40),
- Ապահովել քննության և դատական վարույթի իրականացումն առանց անհարկի ուշացման (հոդված 49),
- Ապահովել, որպեսզի դատախազներն իրավունք ունենան հարուցել և շարունակել վարույթը, անգամ երբ տուժողը հետ է վերցնում բողոքը (հոդված 55),
- Ապահովել, որպեսզի տուժողի սեռական անցյալին և վարքին առնչվող ապացույցները թույլատրվեն միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերելի են և անհրաժեշտ (հոդված 54),
- Ապահովել, որպեսզի արգելված լինեն վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային գործընթացները կամ պատիժները՝ ներառյալ հաշտարարությունը և միջնորդությունը (հոդված 48),

- Ապահովել, որպեսզի տուժողները պաշտպանված լինեն քննության և դատական վարույթի բոլոր փուլերում (հոդված 56),
- Ապահովել, որպեսզի տուժողներին մատչելի լինեն իրավաբանական աջակցությունը և անվճար իրավաբանական օգնությունը (հոդված 57):

Ստամբուլյան կոնվենցիայի հիմքում «այն գիտակցումն է, որ կանանց նկատմամբ բռնությունը գենդերահեն բռնության տեսակ է, որը կատարվում է կանանց նկատմամբ նրանց՝ կին լինելու պատճառով: Պետությունը պարտավոր է լիարժեքորեն պայքարել դրա բոլոր ձևերի դեմ և միջոցներ ձեռնարկել՝ կանխելու կանանց նկատմամբ բռնությունը, պաշտպանելու տուժողներին և քրեական հետապնդման ենթարկելու բռնարարներին: Դա չանելու դեպքում կառաջանար պետության պատասխանատվություն» (Եվրոպայի խորհուրդ, 2011 թ.):

Հայաստանը ստորագրել է կանանց իրավունքների պաշտպանությանը և կանանց նկատմամբ խտրականության վերացմանն առնչվող մի շարք միջազգային պայմանագրեր: Այնուհանդերձ, Հայաստանը դեռևս չի ստորագրել Ստամբուլյան կոնվենցիան: Միավորված ազգերի կազմակերպության համակարգում Հայաստանը 1993 թվականին միացել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին, որոնցով Մասնակից պետություններից պահանջվում է ապահովել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքները՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական և քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու առումով (երկու դաշնագրերում էլ՝ 3-րդ հոդված): Հայաստանը միացել է նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիային (CEDAW) և դրա Կամընսոփ արձանագրությանը, որով 2006 թվականին ստեղծվել է անհատական բողոքների մեխանիզմ: Ավելին, Հայաստանը միացել է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիային (ICERD) 1993 թվականին, Խոշտանգման և դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիային 1993 թվականին, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային 2010 թվականին, և այլն:

Կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի իրավական չափանիշներն Հայաստանի նկատմամբ կիրառելի են 2001 թվականից: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով նախատեսվում է, որ Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների իրականացումը պետք է ապահովված լինի՝ առանց սեռի հիմքով խտրականության: Հայաստանը նաև վավերացրել է Կոնվենցիայի 12-րդ արձանագրությունը, որով խտրականության արգելքը տարածվում է նաև օրենքով սահմանված բոլոր իրավունքների նկատմամբ: Ավելին, Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայով, որին Հայաստանը միացել է 2004 թվականին, ճանաչվում է զբաղվածության և աշխատանքի հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը՝ առանց սեռի հիմքով խտրականության (հոդված 20), ինչպես նաև՝ E հոդվածում ներառված է խտրականությունն արգելող նորմ: Ավելին, Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին կոնվենցիայով (Հայաստանի կողմից վավերացվել է 2008 թվականին) ճանաչվում է, որ մարդկանց թրաֆիքինգը խորապես գենդերացված երևույթ է, և հստակ հղումներ են արվում գենդերային հավասարությանը և գենդերային մեյնսթրիմինգին: Կանանց իրավունքների և գենդերային հավասարության ոլորտում Եվրոպայի խորհրդի չափանիշները և քաղաքականությունները մանրամասնեցված են Նախարարների կոմիտեի՝ Անդամ պետություններին ուղղված տարբեր հանձնարարականներում, մասնավորապես՝ գենդերային հավասարության չափանիշներին և մեխանիզմներին վերաբերող թիվ CM/Rec(2007)17 հանձնարարականում, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության 2014-2017 թթ. ռազմավարությունում:

Ինչ վերաբերում է ազգային մակարդակին, ապա Հայաստանի Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունն հռչակվում է իրավունքի գերակայությամբ կառավարվող ժողովրդավարական պետություն. դրա կարևորագույն չափանիշներից է մարդու իրավունքների և ազատությունների՝ պրակտիկայում իրական պաշտպանությունը երաշխավորող մեխանիզմների գոյությունը, ինչպես նաև

դատական համակարգի իրական անկախությունը և արդարադատության հավասար մատչելիությունը մարդկանց բոլոր խմբերի համար: Այս առումով, մասնավորապես, Էական նշանակություն ունի անձանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառումը: Հայաստանի նախկին Սահմանադրությունն ընդամենը մեկ ընդհանուր նորմ էր պարունակում ցանկացած հիմքով (ներառյալ՝ սեռի հիմքով) խտրականության արգելքի վերաբերյալ, որի նպատակն օրենքի առաջ և պրակտիկայում հավասարության երաշխավորումն էր:

Հայաստանի նոր՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության մեջ ավելացվել են կարևոր նոր դրույթներ: Մասնավորապես, առկա է նոր նորմ օրենքի առաջ ընդհանուր հավասարության վերաբերյալ, որով նաև արգելվում է խտրականությունը որևիցե հիմքով (ներառյալ՝ սեռի հիմքով) (հոդված 14.1§1):⁶ Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված փոփոխությունների 86-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում Հայաստանի քաղաքականության նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության ապահովումը:⁷

Ավելին, Հայաստանի Կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկել Հայաստանի երրորդ և չորրորդ համակցված պարբերական զեկույցների, ինչպես նաև հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցների (ներկայացվել են 2015 թվականի մարտին) վերաբերյալ CEDAW-ի ներկայացրած հանձնարարականները կատարելու ուղղությամբ, մասնավորապես՝ գենդերային հավասարության հարգման առումով երկրում առկա իրավիճակի բարելավման քաղաքականություն որդեգրելու միջոցով: 2010 թվականին Հայաստանի Կառավարությունն հաստատել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ 2011 թվականի մայիսի 20-ին՝ թիվ 19 որոշումը Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին, որով նախատեսվում է Կառավարության ծրագրերի և քաղաքականությունների մեջ գենդերային բաղադրիչի ներառման (գենդերային մեյնսթրիմինգ իրականացնելու) հանձնառությունը:⁸ Գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագրում ներառված աշխատանքներն իրականացվում են մի շարք ուղղություններով և ներառում են գենդերային հավասարության ռազմավարության իրագործումը ղեկավարման ոլորտում և որոշումների կայացման առնչությամբ, սոցիալական և տնտեսական ոլորտները, առողջապահությունը, մշակույթը և հանրային տեղեկատվությունը, ինչպես նաև գենդերային հավասարության քաղաքականության իրագործումը բնության և մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման ոլորտներում:

Վերը նշված թիվ 19 որոշմանը համահունչ, Գենդերային քաղաքականության և գենդերային հավասարության հայեցակարգի իրականացման մշտական հանձնաժողովներ են ստեղծվել երկրի բոլոր մարզերում: Հանձնաժողովների ղեկավարները փոխմարզպետներն են, անդամները՝ մարզպետարանների աշխատողներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2012 թվականի դեկտեմբերին Հայաստանի Կառավարությունը փոփոխություններ կատարեց Վարչապետին առընթեր Կանանց խորհրդի կանոնադրության մեջ՝ առաջարկելով այն ճանաչել որպես գենդերային հավասարության ազգային մեխանիզմ (Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2014 թ.): Կանանց խորհուրդը ստեղծվել է Վարչապետի որոշմամբ: Խորհրդի նախագահը Վարչապետն է, անդամները՝ ճյուղային փոխնախարարները և գերատեսչությունների ղեկավարների տեղակալները (Արդարադատության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Ոստիկանություն, Գլխավոր դատախազություն և այլն): 2015 թվականի մարտի փոփոխություններով Կանանց խորհուրդը ճանաչվեց հասարակական կյանքի բոլոր բնագավառներում կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովման գործընթացն համակարգող ազգային մեխանիզմ: Խորհրդի հիմնական նպատակն է կանխել կանանց նկատմամբ բռնությունը

6 Տե՛ս <http://www.parliament.am/parliament.php?id=constitution&lang=eng>, դիտվել է 2017 թվականի փետրվարի 10-ին:
7 Տե՛ս http://www.parliament.am/law_docs5/Constitution_06.12.2015.pdf, դիտվել է 2017 թվականի փետրվարի 10-ին:
8 Սույն փաստաթուղթը գրելու պահին գենդերային հավասարության նոր ռազմավարությունը դեռևս մշակված չէր:

և իրականացնել կանխարգելման բարելավմանն ուղղված ծրագրեր: Այնուհանդերձ, Կանանց խորհուրդը դեռևս իր աշխատանքի մեթոդների մշակման գործընթացում է: Ունենալով լայն մանդատ և ներգրավելով չափազանց մեծ թվով սուբյեկտների՝ այն դեռևս ոչ լիովին է գործունակ, և առկա է խորհրդի անարդյունավետ դառնալու ռիսկ:

Չնայած այս գարգացումներին, Հայաստանում հանրությանը գրեթե անհայտ է գենդերահեն բռնության հասկացությունը: 2013 թվականի մայիսին «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունման հաջորդեց «գենդեր» հասկացության դեմ ուղղված ագրեսիվ արշավ: «Գենդեր» եզրույթը տարբեր իրավիճակներում տարաբնույթ ընկալումների և քննարկումների արժանացավ:

Չկան օրենքի կատարումն ապահովող բավարար և որոշակի մեխանիզմներ: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը 2014 թվականի հոկտեմբերի 5-9-ը Հայաստան կատարած այցին հաջորդած գեկույցում հիշեցրել է Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների մասին և ողջունել գենդերային հավասարությանն առնչվող քաղաքականությունների և վերոհիշյալ օրենքի ընդունումը՝ որպես քայլեր ճիշտ ուղղությամբ, որոնք հարկ է իրագործել պրակտիկայում: Հաջորդ կարևոր քայլը լինելու է Ստամբուլյան կոնվենցիայի ստորագրումը և վավերացումը:

Թեպետ ներպետական օրենսդրությունը, կառույցները և միջազգային գործիքներից մի քանիսն առկա են Հայաստանում, և Կառավարությունը դրվատանքի է արժանացել իր նախաձեռնությունների համար, այն նաև քննադատության է ենթարկվել վերևից ներքև ուղղորդվող և պետականակենտրոն մոտեցման համար, որի արդյունքում բավարար ուշադրություն չի դարձվել կանանց իրավական կարիքներին: Վերջին հաշվով, կարևոր է գենդերային արձագանքողունակություն ունեցող կառույցներ ստեղծել՝ ուշադրություն դարձնելով մեխանիզմների ոչ միայն ձևին, այլ նաև՝ արդյունավետությանը և գործառնական կողմին:

2. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՑԵՐԸ

Իրավակարգավորման ազգային համակարգը և քաղաքականությունները

Հակախտրականությունը

Հիմնվելով Հայաստանի Սահմանադրության մեջ ամրագրված՝ հավասարության սկզբունքի վրա, կանայք ունեն բոլոր այն իրավունքները, ինչ՝ տղամարդիկ, որը նրանց պետք է հնարավորություն ընձեռի՝ հավասարապես մասնակցելու երկրի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին: Ընդ որում, առկա է կարծիք, թե փաստացի հավասարության հասնելու խնդիրը լուծելու համար զգալի ջանքեր են պահանջվում պետական իշխանություններից և քաղաքացիական հասարակությունից:

Թեպետ Սահմանադրությամբ և Հայաստանի մի շարք օրենսդրական ակտերով, մասնավորապես՝ Քրեական օրենսգրքով, Քրեական դատավարության օրենսգրքով, Աշխատանքային օրենսգրքով և Ընտանեկան օրենսգրքով նախատեսվում են խտրականությունն արգելող իրավական նորմեր, դրանք հաճախ հատվածական և ոչ համապարփակ բնույթ ունեն: Ակնհայտ է, որ խտրականությունից պաշտպանությունը պարզապես խտրականության հիմքերը (սեռ, գենդեր, տարիք, ռասա, կրոն, համոզմունք, քաղաքական կամ այլ կարծիք և այլն) թվարկելը չէ և այդ հիմքերով խտրականությունն արգելող օրենսդրություն ընդունելը չէ:

Չնայած «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի ընդունմանը 2013 թվականին, Հայաստանում չկա հակախտրականության համապարփակ օրենք, որը կպաշտպաներ տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, փոքրամասնությունների (եթնիկ, ազգային կամ կրոնական), երեխաների և այլ անձանց

իրավունքները, և դեռևս չկան խտրականության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ, համապարփակ և հստակ իրավական մեխանիզմներ: Հետևաբար, դեռևս առկա են խտրականության դեպքեր, և Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը և տարբեր ՀԿ-ներ⁹ բողոքում են դրա մասին:

Մարտահրավերներ են մնում ազգային օրենսդրության մեջ խտրականությունը և գենդերահեն բռնությունը սահմանելու հարցում: Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով հանձնաժողովը (CEDAW) 2009 թվականի ամփոփ եզրակացություններում դրվատել էր Հայաստանին Սահմանադրության 14.1 հոդվածն ընդունելու համար, որով երաշխավորվում է օրենքի առաջ հավասարությունը (Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով, 2009 թ.): Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը մտահոգություն հայտնեց հետևյալի կապակցությամբ.

- Դատաիրավական համակարգում (հատկապես իրավապահ մարմիններում աշխատողների շրջանում) բռնության բոլոր ձևերի, օրինակ՝ ընտանեկան բռնության նկատմամբ բավարար չափով զգայուն և տեղեկացված չլինելը (Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով, 2009 թ., պարբ. 23):

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը նշել է, որ Հայաստանը չունի հակախտրականության համապարփակ օրենք (Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, 2014 թ., պարբ. 103), և որ «կանանց դերն հիմնականում կապակցվում է ընտանիքին օժանդակելու և երեխաներին դաստիարակելու հետ» (որոնք հիմնականում չվճարվող աշխատանքի ոլորտներ են), և հանրային դաշտում կանանց առաջնորդությունը դժվարացած է» (Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, 2014 թ., պարբ. 105): ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի՝ Համընդհանուր պարբերական գնահատման հարցերով աշխատանքային խումբն Հայաստանի գնահատումն իրականացրել է 2015 թվականին: Չեկույցում ընդգծվել է խտրականության դեմ պայքարի որոշակի, համապարփակ օրենսդրության բացակայությունը (պարբ. 120): Իսկապես, իրավապաշտպան որոշ կազմակերպություններ եզրակացրել են, որ անհրաժեշտ է նաև հավասարության առանձին մարմին ստեղծել՝ որպես խտրականությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց,¹⁰ ինչպես նաև՝ հակախտրականության համապարփակ օրենսդրություն մշակելու միջոցով ապահովել թերևորկայացված խմբերի և փոքրամասնությունների արդյունավետ պաշտպանությունը:

Հիմնվելով Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի հանձնաժողովի 2014 թվականի հանձնարարականների, Բարձր հանձնակատարի զեկույցի (Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, 2014 թ.), ինչպես նաև Հայաստանի կողմից 2014 թվականին ընդունված՝ Մարդու իրավունքների գործողությունների ազգային ծրագրի և այլ փաստաթղթերի վրա, Արդարադատության նախարարությունը ՀԿ-ների հետ խորհրդակցությունների շրջանակում ներկայումս առանձին օրենք է մշակում խտրականության դեմ պայքարի մասին: Օրենքի հիմնական նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև բոլոր ոլորտներում հավասարության ապահովումը, խտրականությունից իրավական պաշտպանության ընձեռումը և օժանդակությունն այս ոլորտում քաղաքացիական հասարակության կայացմանը: Օրենքի նախագիծը վերջնական տեսքի կբերվի 2017 թվականին՝ որպես պաշտպանության արդյունավետ միջոց այն անձանց համար, ովքեր պնդում են, թե ենթարկվել են խտրականության:

Կանանց նկատմամբ բռնությունը

Կանանց նկատմամբ բռնությունը հրատապ խնդիր է Հայաստանում: Այնուամենայնիվ, դեռևս չկա կոնսենսուս բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության տարածվածության աստիճանի շուրջ: Դա մասամբ կարող է պայմանավորված լինել ընտանիքում բռնության միջադեպերի վերաբերյալ հաղորդումների ներկայացման բարձրացող, սակայն՝

9 Տե՛ս <http://www.stopvaw.org/armenia>, դիտվել է 2016 թվականի նոյեմբերի 28-ին:

10 Տե՛ս http://www.un.am/up/file/UPR_Report_Armenia_Ombudsman_english.pdf, դիտվել է 2016 թվականի նոյեմբերի 28-ին:

դեռևս ցածր ցուցանիշով: Թեպետ այս երևույթները դեռևս տեսանելի չեն դարձվում հասարակությունում, կանայք ենթարկվում են բռնության բազմաթիվ տարբեր ձևերի՝ ներառյալ հոգեբանական բռնության, ֆիզիկական բռնության, սեռական բռնության և տնտեսական բռնության. հարցված կանանց 61.7%-ը նշել է, որ զուգընկերոջ կողմից ենթարկվել են «վերահսկող» վարքագծի, 25%-ը ենթարկվել են հոգեբանական բռնության, 8.9%-ը ֆիզիկական բռնության են ենթարկվել մերձավոր զուգընկերոջ կողմից, իսկ 3.3%-ը՝ սեռական բռնության են ենթարկվել մերձավոր զուգընկերոջ կողմից (Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, 2011 թ.):¹¹ «Պրոակտիվ հասարակություն» ՀԿ-ի հետազոտությունը ցույց է տվել, որ կանանց 59.6%-ը ենթարկվել է ընտանեկան բռնության:¹²

Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունն Հայաստանում դիտարկվում են որպես մասնավոր կյանքի խնդիրներ, ուստի՝ կանայք ձեռնպահ են մնում այդ խախտումների մասին հաղորդում ներկայացնելուց: 2012 թվականին արձանագրվել են կանանց նկատմամբ բռնության 2,026 դեպքեր, որից 625-ը եղել են ընտանեկան բռնության դեպքեր: Նույն ժամանակահատվածում արձանագրվել են անչափահասների նկատմամբ բռնության 190 դեպքեր, որոնցից 13-ը եղել են ընտանեկան բռնության դեպքեր: Բացի դրանից, 2012 թվականին արձանագրվել են բռնաբարության 17 դեպքեր (2011 թվականին՝ ընդամենը 4-ը): Մեղադրական դատավճիռների կայացման ցուցանիշն անհայտ է (OSAC, 2013 թ.):

2013 թվականի 9 ամիսների ընթացքում արձանագրվել են կանանց նկատմամբ բռնության 1,449 դեպքեր, որոնցից 432-ը եղել են ընտանեկան բռնության դեպքեր: Նույն ժամանակահատվածում արձանագրվել են անչափահասների նկատմամբ բռնության 199 դեպքեր, որոնցից 13-ը եղել են ընտանեկան բռնության դեպքեր (Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով): 2013 թվականին արձանագրվել են կանանց նկատմամբ բռնության 2,054 դեպքեր: Ավելին, 2013 թվականին արձանագրվել են ընտանեկան բռնությամբ պայմանավորված մահվան 7 դեպքեր, իսկ հաջորդ տարվա ընթացքում՝ մահվան 12 դեպքեր (Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, 2014 թ., պարբ. 129):

«Պրոակտիվ հասարակություն» ՀԿ-ի իրականացրած՝ հասարակական կարծիքի հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայաստանցի հարցվողները կարծում են, որ ծեծը և մարմնական վնասվածքներ հասցնելն ընտանեկան բռնության ձևեր են, սակայն հարցվածների ընդամենը 3.3%-ն է ընտանեկան բռնություն համարում ընտանիքի չափահաս անդամի ֆինանսական միջոցների խիստ վերահսկողությունը: Հարցվողների 18.4%-ն ընտանեկան բռնություն են համարում ընտանիքի չափահաս անդամի տեղաշարժվելու ազատության խիստ վերահսկողությունը: Պատասխանելով այն հարցին, թե «Ձեր կարծիքով, ո՞րն է բռնության հիմնական պատճառն Հայաստանում», 54.9%-ը նշել են սոցիալ-տնտեսական դժվարությունները և գործազրկությունը, 17%-ը՝ ավիոհղը և թմրադեղերի օգտագործումը, իսկ 16.15%-ը՝ ազգային մտածելակերպը («Պրոակտիվ հասարակություն» ՀԿ, 2011 թ.):

Հարկ է հիշատակել, որ Հայաստանի Ոստիկանությունը կենտրոնանում է կանանց նկատմամբ բռնության դեպքերը կանխելու և դրանց դեմ պայքարի ուղղությամբ: 2013 թվականին Հայաստանի Հանրապետության Ոստիկանապետի հրամանով պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի առանձին վարչություն: Ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության յուրաքանչյուր դեպք արձանագրվում է ոստիկանության մարզային բաժնում: Այնուհետև, տվյալների հավաքագրումը և առանձին հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Տեղեկատվական կենտրոնում:

Թեպետ ոստիկանության վիճակագրությունից հնարավոր չէ հրապարակային տվյալներ ստանալ ընտանեկան բռնության մասին, առկա են տեղեկություններ կանանց վրա անհամամասնորեն ավելի շատ ազդող որոշ հանցագործությունների համար կայացված մեղադրական դատավճիռների ցուցանիշների վերաբերյալ: 2010-14 թթ. ժամանակահատվածի պաշտոնական վիճակագրական տվյալները (հատկապես

11 Մեքեբրումը՝ Մարդու իրավունքների հանձնակատար (2014 թ.):

12 «Պրոակտիվ հասարակություն» ՀԿ, «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության հետազոտություն», Երևան, 2011 թ., մեքեբրված է CommDH(2015)2 փաստաթղթում, պարբ. 128:

բռնաբարության վերաբերյալ) և դատապարտված անձանց վերաբերյալ քանակական տվյալները ներկայացված են 1.1 և 1.2 աղյուսակներում:¹³

Աղյուսակ 1. Արձանագրված հանցագործությունների թիվը, 2010-14 թթ.

2010	2011	2012	2013	2014	Հանցագործության տեսակը
68	89	75	73	81	Կանխամտածված սպանություն և սպանություն
167	170	170	186	216	Կանխամտածված ծանր մարմնական վնասվածք պատճառել
15	15	19	19	22	Բռնաբարություն և բռնաբարության փորձ
107	106	63	73	69	Ավագակային հարձակում
249	238	247	184	220	Գողություն
1 524	1 525	1 139	1 222	1 046	Թմրադեղերին առնչվող հանցագործություններ
373	481	189	185	200	Խուլիգանություն
883	953	960	1 050	847	ՃՏՊ-ներ
182	195	183	196	181	Մահ պատճառել

Աղյուսակ 2. Դատապարտված իրավախախտները, ըստ սեռի, 2010-14 թթ.

2010	2011	2012	2013	2014	Մեղադրական դատավճիռների թիվը
4 402	3 940	3 727	3 481	2 944	Ընդամենը
4 174	3 722	3 516	3 242	2 783	Դատապարտված տղամարդիկ
228	218	211	239	161	Դատապարտված կանայք

Տվյալները բնորոշում են հանցավորության՝ ներառյալ ամենածանր և առավել հաճախ կատարվող հանցագործությունների վիճակն Հայաստանում, որոնք հավաքվել են Հայաստանի Ոստիկանության և Կառավարության կողմից: Տվյալները ներառում են բացվածքն ըստ հանցանքը գործած անձանց սեռի, տարիքի և սոցիալական կարգավիճակի: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության տեղեկությունները պարունակում են տվյալներ դատապարտված անձանց թվաքանակի մասին, սակայն կանանց ներկայացրած բողոքների թվի վերաբերյալ չկան նման բացվածք պարունակող պաշտոնական տվյալներ:

Պայմանավորված ինստիտուցիոնալ, իրավական և համակարգային խոչընդոտներով՝ քրեական գործը կարող է հարուցվել, և քրեական վարույթը և հետապնդումը՝ հետագայում հնարավոր դառնալ, միայն եթե տուժողը ներկայացրել է բողոք (Քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդված): Այնուամենայնիվ, ընտանիքի և հասարակության ճնշման պատճառով կանայք հաճախ հետ են վերցնում իրենց բողոքները: Կնոջ համար «ամոթալի» է համարվում իր նկատմամբ բռնության մասին բարձրաձայնելը, քանի որ դա «կարող է վտանգել ընտանեկան միավորը և կայունությունը» (Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, 2014 թ., պարբ. 124): Ավելին, ոստիկանությունը բավական հաճախ կանանց համոզում է չներկայացնել բողոք:¹⁴ Ավելին, սեռական բռնությունից տուժած անձինք որոշ դեպքերում զրկվում են բուժօգնությունից: Այս առումով, Ոստիկանապետը նույնպես ընդունել է այն ոստիկանների դիրքորոշումները փոխելու անհրաժեշտությունը, ովքեր պատասխանատու են հաղորդումների ցածր մակարդակի համար: Կանանց սոցիալ-տնտեսական վիճակի և իշխանությունների կողմից բռնությունը և ընտանեկան

¹³ Հայաստանի Հանրապետության Ոստիկանությունից ստացված տվյալներ:
¹⁴ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձր հանձնակատարի գրասենյակ, Մարդու իրավունքների խորհրդի թիվ 5/1 բանաձևի հավելվածի 15 (c) պարբերություն, խորհրդի 16/21 բանաձևի հավելվածի 5-րդ պարբերություն:

բռնությունը հերքելու պատճառով կանայք երբեմն ստիպված են լինում մնալ բռնարար կամ վերահսկող զուգընկերոջ հետ:

Ինչ վերաբերում է Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերին, որոնք արդյունավետորեն չեն հայտնաբերվում, քննվում, հետապնդվում և պատժվում, ապա Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարն իշխանություններին կոչ է անում շտկել այդ թերությունները՝ վավերացնելով Ստամբուլյան կոնվենցիան (Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, 2014 թ.): Ստամբուլյան կոնվենցիայի համաձայն, կանանց նկատմամբ բռնությունը.¹⁵

- Ընկալվում է որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության տեսակ, և ներառում է գեղեցիկ հեն բռնության բոլոր արարքները, որոնք կանանց պատճառում են կամ հավանաբար կարող են պատճառել ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնաս կամ տառապանք՝ ներառյալ այդպիսի արարքների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, անկախ դրանց՝ հանրային կամ մասնավոր կյանքում տեղի ունենալուց (հոդված 3, պարբ. ա):

Ստամբուլյան կոնվենցիայով նախատեսվում է նաև, որ ընտանեկան բռնություն է.

- Ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության բոլոր արարքները, որոնք տեղի են ունենում ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկայիս ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե արդյոք բռնարարը տուժողի հետ բնակվում կամ բնակվել է միևնույն կացարանում (հոդված 3, պարբ. b):

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովը խորհուրդ է տվել (Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով, 2009 թ.), որպեսզի մասնակից պետությունն համարժեքորեն արձագանքի հիմնախնդրին.

- Անհապաղ ընդունելով օրենսդրություն, որով ուղղակիորեն կարգելի ընտանեկան բռնությունը՝ վերջինս սահմանելով որպես առանձին հանցատեսակ,
- Լրացուցիչ ապաստարաններ տրամադրելով ընտանեկան բռնությունից տուժած անձանց,
- Ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկության բարձրացման միջոցառումներ իրականացնելով իրավապահ մարմինների պաշտոնյաների՝ ներառյալ ոստիկանների, դատախազների և դատավորների, ինչպես նաև սոցիալական աշխատողների, ուսուցիչների և հանրության լայն շրջանակների համար:

Արդեն մի քանի տարի է, ինչ Հայաստանն աշխատում է ընտանեկան բռնության մասին օրենքի վրա: 2012-13 թվականներից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացրել է Հայաստանում ընտանեկան բռնությունից տուժած կանանց մատուցվող ծառայությունների որակի բարելավման ծրագիր: Իրականացվել են հետազոտություններ որոնք հնարավոր են դարձրել պարզել ընտանեկան բռնությունից տուժած կանանց մատուցվող ծառայությունների բնույթը, բաշխվածությունը, որակը, արդյունավետությունը և մատչելիությունը: Հետազոտությունների արդյունքում առանձնացվել են մի շարք ինստիտուցիոնալ, հոգեբանական և ֆինանսական խնդիրներ, որոնց հիման վրա մշակվել է ընտանեկան բռնության մասին օրենքի նախագիծ: Օրենքի նախագիծը 2016 թվականի դեկտեմբերին Կառավարության և ոչ կառավարական հատվածի ներկայացուցիչների աշխատանքային խմբի կողմից ներկայացվել է Կառավարություն:

Եվրամիության կողմից տրամադրվող բյուջետային օժանդակության վերաբերյալ բանակցություններում Հայաստանն համաձայնել է նախքան 2016 թվականի տարեվերջ ընդունել ընտանեկան բռնության մասին նոր օրենքը՝ ԵՄ-Հայաստան բյուջետային օժանդակության ծրագրով ստանձնած հանձնառությանը համահունչ: Այնուհանդերձ, հարկ է հիշատակել, որ ընտանեկան բռնության մասին օրենքի ընդունման ժամկետի

¹⁵ Ստամբուլյան կոնվենցիայի նախաբանում ճանաչվում է այն փաստը, որ «կանանց նկատմամբ բռնությունը կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն անհավասար ուժային հարաբերակցության դրսևորում է, որը հանգեցրել է տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ գերիշխանության և խտրականության, ինչպես նաև՝ կանանց լիարժեք առաջխաղացման կասեցման»:

և Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման ժամկետի միջև առկա է անջրպետ, որի մեծությունը դեռևս անհայտ է: Ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի տրամաբանությունը պետք է համահունչ լինի Ստամբուլյան կոնվենցիայի տրամաբանությանը. այլապես, վերջինիս վավերացումից հետո կարող է ծագել օրենքը վերանայելու և Կոնվենցիային համապատասխանեցնելու անհրաժեշտություն: 2017 թվականի փետրվարի դրությամբ օրենքի նախագիծն ընդունված չէր:

Իրավաբանական օգնության մատչելիությունը

Իրավաբանական օգնության մատչելիությունը կախված է ոչ թե առանձին վերցված մեկ իրավական քաղաքականությունից, այլև՝ Հայաստանում առկա իրավական, սոցիալական և մշակութային ընդհանուր հարացույցերի համակցությունից, ինչպես նաև՝ էականորեն պայմանավորված է պետության միջամտություններով: 1993 թվականին Հայաստանը միացել է ԶԶԻՄԴ-ին՝ չանելով վերապահումների մասին հայտարարություններ և ճանաչելով ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի իրավագործությունը (հոդված 41): Ձեռնարկելով առաջին այդ քայլը՝ պետությունը միջազգային հանձնառություն է ստանձնել՝ զարգացնելու իրավաբանական օգնությունը՝ որպես արդարադատության մատչելիության կարևորագույն սկզբունք: Հայաստանի Սահմանադրության և Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Կասկածյալները և մեղադրյալներն իրավունք ունեն վարձել իրենց նախընտրած փաստաբաններին: Քրեական վարույթն իրականացնող մարմինը պատասխանատու է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից իրավաբանական օգնության ստացումը երաշխավորելու համար, ինչպես նաև՝ այն տրամադրել անվճար, եթե դա անհրաժեշտ է՝ ելնելով տվյալ անձանց ֆինանսական վիճակից: Այս նպատակով 2006 թվականին Փաստաբանների պալատի կազմում ստեղծվել է Հանրային պաշտպանի գրասենյակ, որի խնդիրը սոցիալապես խոցելի խմբերին անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելն է:

Թեպետ այս համակարգի ստեղծումն անկասկած դրական և անհրաժեշտ քայլ է, իրավակարգավորման ազգային համակարգի անկատարությունը և որոշակի այլ գործոններ խաթարում են կանանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:¹⁶ Մասնավորապես, թերություններ կան Հայաստանի գործող օրենսդրության մեջ, որը չի պարունակում ընտանեկան բռնությունից տուժած անձանց անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու մասին հոդված:

Ստամբուլյան կոնվենցիայի 57-րդ հոդվածով նախատեսվում է, որ «Մասնակից պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմաններով տուժողներին երաշխավորել իրավաբանական աջակցության և անվճար իրավաբանական օգնության իրավունքը»: Ավելին, Ստամբուլյան կոնվենցիայի Բացատրական գեկույցում ընդգծվում է «իրավաբանական աջակցության և անվճար իրավաբանական օգնության իրավունքն իրենց ներպետական օրենսդրությամբ նախատեսված պայմաններով տուժողներին երաշխավորելու՝ Մասնակից պետությունների պարտավորությունը սահմանելու» անհրաժեշտությունը (Եվրոպայի խորհուրդ, 2011, պարբ. 294): Կանանց բռնությունից պաշտպանելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec(2002)5 հանձնարարականում և կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1582 (2002) հանձնարարականում պետություններին կոչ է արվում անվճար իրավաբանական օգնություն տրամադրել ընտանեկան բռնությունից տուժած անձանց, որպեսզի ընտանեկան բռնությունից տուժած անձինք անվճար իրավաբանական խորհրդատվություն և օգնություն ստանան նախքան իրավական միջոցներ ձեռնարկելը: Թեպետ Հայաստանը դեռևս չի վավերացրել Ստամբուլյան կոնվենցիան, Մարդու իրավունքների գործողությունների ազգային ծրագրով նախատեսվում է լրացուցիչ անգամ գնահատել այն վավերացնելու նպատակահարմարությունը:

¹⁶ Աշխատանքային ծանրաբեռնվածությունը, հանրային պաշտպանների անբավարար թիվը և ցածր աշխատավարձերն համարվում են լրջագույն հիմնախնդիրներ, որոնք նպաստավոր չեն որակյալ իրավաբանական օգնության տրամադրման տեսանկյունից՝ հատկապես մարզային մակարդակում:

իրավական երաշխիքների բացակայությունը և գենդերակույր իրավանորմերի գոյությունը երկրում խոչընդոտում են կանանց համար արդարադատության մատչելիությունը: Ուստի, անհրաժեշտ է բարելավել ազգային իրավական համակարգը, մասնավորապես՝ կազմակերպել վերապատրաստումներ հանրային պաշտպանների համար, ցուցաբերել հարիր ավազանական աջակցություն և բարձրացնել իրավունքների մասին իրազեկությունը, քանզի դրանք բոլոր անձանց և հատկապես կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման նախապայմաններ են:

Կանանց համար արդարադատության մատչելիության վրա ազդող սոցիալ-տնտեսական և մշակութային խոչընդոտները

Միջազգային հանրությունը բազմիցս ընդգծել է կանանց և տղամարդկանց միջև սոցիալ-տնտեսական և մշակութային հավասարություն ապահովելու կարևորությունը: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (CEDAW) պարունակում է մի շարք դրույթներ, որոնք ուղղակիորեն վերաբերում են սոցիալական, տնտեսական և մշակութային խնդիրներին (13-րդ հոդվածը վերաբերում է կանանց համար տնտեսական և սոցիալական օգուտների կարգավորմանը): Այդ կանոնները մանրամասնեցված և վերլուծված են Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովի աշխատանքներում, որոնց նպատակն է ապահովել Կոնվենցիայի արդյունավետ կատարումը մասնակից պետություններում:

Հայաստանի բնակչության կեսից ավելին կանայք են,¹⁷ և հույժ կարևոր է, որպեսզի նրանք խոչընդոտների և խտրականության չհանդիպեն երկրի տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքին մասնակցելու ճանապարհին: Հայաստանի տնտեսության բոլոր ոլորտներում գործելու՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ամրագրված են Հայաստանի օրենսդրությամբ: Այնուհանդերձ, կանանց առջև ծառայած սոցիալ-տնտեսական մարտահրավերները, ինչպիսիք են ցածր եկամուտները, բարձր գործազրկությունը, ձեռնարկատիրական սահմանափակ գործունեությունը, սոցիալական և տնտեսական զարգացման գործընթացին ոչ համարժեք մասնակցությունը թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերում և այլ խնդիրներ խոչընդոտում են նրանց դերի բարձրացումն Հայաստանում:

Հայաստանի աշխատուժի մեջ երիտասարդ կանանց և տղամարդկանց նվիրված՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դեռ վաղ հասակից կանանց ընտրությունը սահմանափակված է որոշակի ոլորտներով (օրինակ՝ կրթության ոլորտ), մինչդեռ երիտասարդ տղամարդիկ ավելի մեծ թվով տարբերակներ ունեն հնարավոր աշխատանքի առումով՝ ներառյալ տեխնիկական կամ ֆիզիկական աշխատանքը: Դրա հետևանքով գործազրկությունը երիտասարդ աղջիկների շրջանում 36.6% է, ինչը 12 տոկոսային կետով ավելի բարձր է, քան երիտասարդ տղամարդկանց շրջանում: Ուստի, երիտասարդ կանանց պարագայում երիտասարդ տղամարդկանց համեմատ ոչ միայն զգալիորեն ավելի ցածր է աշխատանքի տեղավորվելու հավանականությունը, այլևս և՛ աշխատաշուկայից դուրս գալու առումով խոցելիությունը, քանի որ կա՛մ չի խրախուսվում նրանց աշխատանքը, կա՛մ նրանք ստիպված են լինում կատարել ընտանեկան պարտականություններ: Ավելին, ուսումնասիրությամբ հիմնավորվել է աշխատավարձի նկատելի գենդերային ճեղքվածքը. կին աշխատողների միջին աշխատավարձը մեկ երրորդով ավելի պակաս է, քան՝ տղամարդկանցը, թեպետ աղջիկների կրթության մակարդակն ավելի բարձր է, որը պետք է որ սովորաբար հանգեցնեի ավելի լավ հնարավորությունների և ավելի բարձր աշխատավարձերի:¹⁸

Զբաղվածության ոլորտի հորիզոնական և ուղղահայաց տարբերակումը, որին Հայաստանում ենթարկվում են կանայք, նրանց զրկում է ղեկավար պաշտոններից և կարիերայի զարգացման հնարավորություններից: Նրանք հիմնականում ակտիվ են

17 Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության տրամադրած տվյալներով, 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ երկրի մշտական բնակչության կազմում են 1,573,582 կանայք և 1,443,497 տղամարդիկ:

18 «Հայաստանի Հանրապետությունում կանանց քաղաքական մասնակցության խթանումը. առկա նախաձեռնությունները, հիմնախնդիրները և հեռանկարները», Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն, Երևանի պետական համալսարան, 2015 թ.:

սպասարկման ոլորտի մասնագիտություններում, ինչպիսիք են մանրածախ առևտուրը, կրթությունը, առողջապահությունը և սոցիալական ծառայությունները: Կին աշխատուժն Հայաստանում հիմնականում կրթության ոլորտում է, որտեղ աշխատողների 80.9%-ը կանայք են: Առողջապահական և սոցիալական ծառայություններում աշխատողների 83.4%-ը կանայք են, տնային տնտեսություններում՝ 71%-ը, իսկ հյուրանոցներում և ռեստորաններում՝ ոլորտում աշխատողների ընդհանուր թվի 64.9%-ը: Կանանց գործազրկությունը հասնում է 18%-ի, տղամարդկանցը՝ 14%-ի: Աշխատավարձի գեղեցիկային ճեղքվածքը 34.4% է:¹⁹

Կանանց տնտեսական դերի բարձրացումը կարևորագույն նշանակություն ունի գեղեցիկային հավասարության հասնելու, արդարադատության մատչելիությունն ապահովելու և Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակների ուղղությամբ առաջընթաց ձեռք բերելու տեսանկյունից: Աշխատուժի մեջ կանանց մասնակցության ցուցանիշով Հայաստանն առաջատար դիրքերում է (Արևելյան Գործընկերության պետությունների շարքում): Այնուամենայնիվ, վերջին տարիներին Հայաստանում կանանց տնտեսական աջակցություն ցուցաբերելու նպատակ հետապնդող վարկային ծրագրերի մեծ մասի պայմանները բավականաչափ արտոնյալ չեն եղել, որպեսզի գրավիչ դարձնեին նման վարկավորումը, և ուստի՝ դրանք չեն նպաստում կանանց տնտեսական առաջխաղացմանը: Որոշ ծրագրերի շրջանակում վարկավորման տոկոսադրույքն այնքան բարձր է, որ կանայք չեն կարող զարգացնել սեփական բիզնեսը, իսկ լավագույն սցենարի դեպքում նրանք հազիվ են կարողանում ապրուստ հայթայթել իրենց ընտանիքների համար: Ուստի, Հայաստանի Կառավարությանն անհրաժեշտ է գեղեցիկային հավասարությունը ներառել ոլորտային ռազմավարություններում և գործողությունների ծրագրերում՝ կանանց տնտեսական դերի բարձրացումը գերակայություն դարձնելով գեղեցիկային հավասարությանն ուղղված քաղաքականությունների մշակման գործընթացներում:

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը խորհուրդ է տալիս «գեղեցիկային բաղադրիչը ներառել բյուջետավորման և պլանավորման գործընթացներում», ինչպես նաև ճանաչել և իրագործել հավասար արժեք ունեցող աշխատանքի դիմաց հավասար վճարում ստանալու իրավունքը: Հանձնակատարը նաև խորհուրդ է տալիս միջոցներ ձեռնարկել՝ քաջալերելու համար ընտանեկան պարտականություններ ունեցող տղամարդկանց և կանանց աշխատանքային զբաղվածությունը և օժանդակելու համար կանանց զբաղվածությունը և նրանց ներգրավումը գործարար գործունեության մեջ (Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, 2014 թ.):

Կանանց համար արդարադատության մատչելիության ծրագրերի ֆինանսավորման հիմքում պետք է դրված լինի արդարադատության մատչելիության ապահովման ամբողջական մոտեցում, որում հաշվի կառնվեն իրավունքների խախտումների ֆիզիկական, հոգեբանական և ընդհանուր սոցիալ-տնտեսական հետևանքները: Դա ենթադրում է նաև պայքար գեղեցիկային կարծրատիպերի դեմ՝ երկրում արդարադատության մատչելիությունը բարելավելու նպատակով:

Պայքարը գեղեցիկային կարծրատիպերի դեմ

Բոլոր մարդիկ՝ անկախ սեռից, սոցիալական դիրքից, կրթությունից կամ ազգությունից, պետք է արդարադատություն ստանալու հավասար հնարավորություններ ունենան: Կարևոր է հիշատակել, որ հավասարության այս սկզբունքը, որն ամրագրված է և՛ ներպետական, և՛ միջազգային իրավական տեքստերում, պետք է իրագործվի իրազեկության բարձրացման արդյունավետ միջոցառումների օգնությամբ: Մասնավորապես, գեղեցիկային հավասարության և կանանց դերի խնդիրները պետք է գերակայություններ լինեն Հայաստանի համար՝ ծառայելով որպես կարևոր միջոց կանանց համար արդարադատության փաստացի մատչելիությունը երաշխավորելու համար:

Այս համատեքստում ՉԼՄ-ները կարևորագույն դեր պետք է կատարեն հանրության, և մասնավորապես՝ կանանց իրազեկության բարձրացման գործում: Կանանց

¹⁹ ILOSTAT-ի տվյալների շտեմարան (2013 թ.):

հարցերով չորրորդ համաշխարհային խորհրդաժողովում (Պեկին, 1995 թ.) ընդունված Գործողությունների պլատֆորմը²⁰ և Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության ռազմավարությունը պարունակում են մասնակից պետություններին ուղղված որոշակի առաջարկություններ, որոնք առնչվում են գենդերային հավասարությանը և լրատվամիջոցներին: Այնուամենայնիվ, ՉԼՄ-ներով լուսաբանվող՝ կանանց հիմնախնդիրներն համարժեքորեն չեն լուծում կանանց առջև ծառայած իրական դժվարությունները և հասարակական կյանքին նրանց լիարժեք մասնակցության խոչընդոտները: Ավելին, պատշաճ կերպով չի լուսաբանվում կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքին: Գենդերային կարծրատիպերով համեմված հեռուստատեսային նյութի, ֆիլմերի և սերիալների բացասական հետևանքներն ակնհայտ են կանանց արժանապատվությունը վիրավորող պատկերներում, և այդ ծրագրերն հաճախ արդարացնում են բռնությունը՝ որպես ընտանիքում և հասարակությունում կոնֆլիկտները լուծելու միջոց: Կարճ ասած՝ նրանք արժեզրկում են կանանց:

Գովազդում կանայք հաճախ ներկայացվում են որպես կա՛մ ապրանք, կա՛մ ապրանքը լրացնող գործոն, թեպետ արվեստը և ՉԼՄ-ները պետք է կանանց և տղամարդկանց դրական իդեալներ կերտեն և հաղթահարեն բացասական կարծրատիպերը: Հեռուստաալիքները, մասնավորապես, այս առումով շատ անելիքներ ունեն. նրանք պետք է անուշադրության չմատնեն այս մտահոգությունները և պետք է ակտիվ դեր կատարեն գենդերային հավասարության ապահովման գործում, մասնավորապես՝ ներկայացնելով կանանց և տղամարդկանց իրատեսական կերպարներ: ՀԿ-ների որոշ ուսումնասիրություններ նույնպես անդրադարձել են հեռուստատեսային ծրագրերում ընտանեկան բռնությանը և գենդերային հիմնախնդիրներին:²¹

ՉԼՄ-ների վերլուծությունը ցույց է տալիս, որ լրագրողների մեծամասնությունը՝ ներառյալ հաջողված կանանց կերպարը ներկայացնողները, բավարար գիտելիք չունեն, որպեսզի ակտիվորեն ջատագովեն ազգային գենդերային քաղաքականությունները և գենդերային հավասարությունը: Դեռևս լուրջ թերություններ կան Հայաստանում լրագրողների վերապատրաստման և մասնագիտական զարգացման ծրագրերում: Գենդերային հավասարության թեմայով կրթություն լրագրողների համար իրականացվում է միայն որոշ համալսարաններում կա՛մ որպես ընտրովի դասընթաց, կա՛մ մագիստրատուրայում: Լրագրողների շրջանում գիտելիքի և համոզմունքի բացակայությունն առավել ակնհայտ դարձավ 2013 թվականի սեպտեմբերին սոցիալական ցանցերում մեկնարկած արշավի ընթացքում, որի թիրախը 2013 թվականի մայիսին ընդունված՝ կանանց և տղամարդկանց միջև հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենքն էր: Դիտավորյալ աղճատելով գենդերային հավասարության հասնելուն միտված պետական քաղաքականությունը՝ որպես «ավանդական ազգային արժեքների դեմ ուղղված և հայ ընտանիքը քայքայող» քաղաքականություն, անձանց մի խումբ պահանջում էր ուժը կորցրած ճանաչել օրենքը: Գենդերային հավասարության դեմ մղվող և օրենքը թիրախավորող արշավի շրջանակում կիրառված մեթոդները կոպտորեն խախտում էին կանանց և տղամարդկանց միջև հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, որով ուղղակիորեն արգելված է գենդերային հավասարության գաղափարն հեղինակագրկող տեղեկատվության տարածումը: Արշավն իրականացնողները, սակայն, հերքում էին գենդերային կարծրատիպերի, կանանց նկատմամբ խտրականության և բռնության գոյությունը և հարձակման թիրախ դարձնում կանանց իրավունքները:

Թեպետ գենդերային կարծրատիպերի վերարտադրումը ՉԼՄ-ների, մշակույթի և կրթության միջոցով օրենքի համաձայն համարվում է անուղղակի խտրականության դրսևորում, Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չեն լծակներ տպագիր մամուլում և հատկապես սոցիալական ցանցերում խտրականության քարոզի դեմ պայքարելու համար: Կանանց դերի և տեղի վերաբերյալ ավանդական հայրապետական պատկերացումների ուղղությամբ հանրային կարծիքի վրա ազդելու նպատակ հետապնդած արշավը շարունակվեց խորհրդարանական, նախագահական և տեղական ընտրությունների ժամանակ, և այդ ընթացքում արձանագրվեցին կանանց

20 Տե՛ս <http://www.un.org/womenwatch/daw/beijing/platform/>, դիտվել է 2017 թվականի հունվարի 16-ին:

21 «Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական հեռուստատեսիայի մասին», համացանցում <http://www.yso.am/files/Reserch%20paper%2003.09.2014.pdf>, դիտվել է 2016 թվականի նոյեմբերի 28-ին:

Նկատմամբ սեքսիզմի բազմաթիվ դրսևորումներ: Այնուամենայնիվ, դրանք պատշաճ արձագանք չառաջացրեցին հանրության լայն շրջանակներում, համապատասխան իրավապահ մարմինների, քաղաքական կուսակցությունների կամ ՀԿ-ների շրջանում:²²

Չնայած որ օրենքում շեշտվում է գենդերային հավասարության մշակույթը զարգացնելու և խթանելու անհրաժեշտությունը և մամուլով գենդերային հավասարության գաղափարը ջատագովող նյութեր տարածելու և հասարակությունը գենդերային հավասարության դեմ ուղղված պրոպագանդայից պաշտպանելու անհրաժեշտությունը, ակնհայտ է դարձել, որ լրատվական հանրությունն իր ամբողջության մեջ պատրաստ չէր պետության գենդերային քաղաքականության վրա հիմնված հակափաստարկներ առաջ քաշել և բացատրել այդ քաղաքականության նպատակները և խնդիրները: Ուստի, որոշվեց «գենդեր» բառի փոխարեն պաշտոնական փաստաթղթերում և այլ պաշտոնական տեքստերում կիրառել «հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ տղամարդկանց և կանանց համար եզրույթը»՝ նպատակ ունենալով բացառել այդ եզրույթի միջոցով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ կապված սկզբունքների վրա կատարվող հարձակումները:²³

Թեպետ Գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագրով նախատեսվում են մի քանի ռազմավարական քայլեր անօրինական գործողություններից պաշտպանությունը բարելավելու համար, դեռևս առկա են մի շարք մարտահրավերներ, մասնավորապես.

- ՉԼՄ-ների անբավարար և անարդյունավետ մասնակցությունը կանանց իրավունքների և գենդերային հավասարության խնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացման աշխատանքներին,
- ՉԼՄ-ների և մշակութային կառույցների անարդյունավետ գործունեությունը կնոջ և տղամարդու պատշաճ օրինակելի կերպարների կերտման հարցում,
- Կանանց արժանապատվությունը վիրավորող տեղեկությունների անարգել տարածումը:

Թեպետ գենդերային հավասարության կրթության համակարգայնացումը գերակա ուղղություն է երկրի գենդերային հավասարության քաղաքականության համար, գործընթացը բարդ է և դանդաղ է ընթանում: Հանրության լայն շրջաններում գենդերային իրազեկության բարձրացման գործընթաց չկա և դեռևս համակարգված էլ չէ: Գենդերային հավասարության վերաբերյալ գիտելիքի տրամադրումը և դպրոցներում և բուհերում սովորողների քաղաքացիական պատասխանատվության կերտումը դեռևս պարտադիր չեն դարձել կրթական համակարգում:

Ուստի, խիստ ցանկալի է ապահովել նաև, որպեսզի կրթական համակարգը թե՛ աղջիկների, թե՛ տղաների համար գերծ լինի գենդերային դերերին առնչվող կարծրատիպերից և խթանի գենդերազգայուն վարքագիծը, մասնավորապես՝ հետևյալ բնույթի գործողություններով.

- Կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ տղաների և տղամարդկանց գիտելիքի բարձրացման նպատակով հատուկ ծրագրերի մշակում,
- Ինքնագնահատականի բարձրացման նպատակով աղջիկների և կանանց համար հատուկ ծրագրերի մշակում,
- Կյանքի բոլոր բնագավառներում կանանց վիճակի վրա ավանդույթների և սովորույթների ազդեցության մշտադիտարկում,
- Վնասակար ավանդական գործելակերպերի և գենդերային կարծրատիպերի վերացում:

22 Տե՛ս, օրինակ, «2009-2012 թվականներին Հայաստանի Հանրապետությունում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կատարման այլընտրանքային գեկույց», Երևան, 2014 թ.:

23 Տե՛ս, օրինակ, <http://www.equalpowerlastingpeace.org/2013/09/11/armenian-government-removes-gender-from-law>, դիտվել է 2016 թվականի նոյեմբերի 28-ին:

ՉԼՄ-ներում լուսաբանված գործերից *ԵՆԱՐՔԱՆՈՅԱՆՆԸ ՆՂՂԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավճիռը Հայաստանի նկատմամբ:²⁴ Այս բազմաշերտ գործը ցույց է տալիս, որ կարևոր է ոչ միայն բարելավել կարգավորման ազգային համակարգը, այլ նաև՝ ուժեղացնել ՉԼՄ-ների ինքնակարգավորման մեխանիզմները և վարքագծի կանոնադրերը, որպեսզի հստակ չափանիշների սահմանմամբ և առաջընթացի մշտադիտարկում իրականացնելով դատապարտվեն ոչ էթիկական և խտրական գործելակերպերը և պայքար մղվի դրանց դեմ: Անհրաժեշտ է ունենալ էթիկայի և վարքագծի ներքին կանոնադրեր: ՉԼՄ-ները և կարևոր այլ սուբյեկտները պետք է հաշվետվության, ծրագրման և առօրյա գործունեության որոշակի չափանիշների համաձայն գործեն:

Վերջին հաշվով, իրավական երաշխիքների բացակայությունը և անհավասար կամ գենդերակույր իրավանորմերի գոյությունը խոչընդոտում են կանանց համար արդարադատության մատչելիությունը: Ավելին, արդարադատության մեխանիզմներից, օրինակ՝ դատարաններից, իրավաբանական օգնությունից և հայեցակարգային ծրագրերից օգտվելու՝ կանանց կարողությունը սահմանափակված է տնտեսական գործոնների (դրամական միջոցների անբավարարություն), սոցիալական և հոգեբանական գործոնների (խարան, տեղաշարժվելու սահմանափակումներ և ժամանակային խոչընդոտներ) և կրթական գործոնների (սահմանափակ կրթություն, տեղեկատվության և սոցիալական ցանցերի սահմանափակ հասանելիություն), ինչպես նաև այլ գործոնների պատճառով:

3. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալ-տնտեսական գործոնները սերտորեն կապակցված են համակարգայինների հետ: Սեփական իրավունքների մասին տեղեկությունների ոչ բավարար մատչելիությունն հանգեցնում է կանանց կրկնագոհացման՝ նրանց անկարող դարձնելով պայքարել իրենց իրավունքների համար:

Չնայած կանանց դիրքն ամրապնդելուն ուղղված տարբեր ջանքերին և գենդերային հավասարության ապահովման ուղղությամբ վերջին շրջանում Հայաստանի ձեռք բերած առաջընթացին, երկրում շարունակում են գերիշխող դիրք գրավել տղամարդիկ: Գենդերային ճեղքվածքի 2016 թվականի համաշխարհային զեկույցի (Global Gender Gap report) տվյալներով, Հայաստանը 142 պետությունների շարքում իջել է մինչև 102-րդ հորիզոնականը (2011 թվականին Հայաստանը 135 պետությունների շարքում 84-րդն էր):²⁵ Թեպետ կանայք և տղամարդիկ պաշտոնապես ունեն նույն իրավունքները և իրավական կարգավիճակը, կանայք հասարակությունում, տնտեսության և քաղաքականության մեջ շարունակում են մնալ մարգինալացված և թերներկայացված:

Կանայք բնակչության մոտ 52%-ն են, բարձրագույն կրթություն ունեցողների՝ մոտ 58%-ը: Այնուամենայնիվ, պետական կառավարման և որոշումների կայացման մեջ կանանց ներկայացվածության և արդյունավետ մասնակցության ցուցանիշները մնում են ցածր: Հայաստանի խորհրդարանում պատգամավորների ընդհանուր թվի ընդամենը 10.69%-ն են կանայք,²⁶ որը զգալիորեն ցածր է երկու սեռերի նվազագույն ներկայացվածության՝

24 Գործը վերաբերում էր տղև. Նարինե Նալբանդյանին և այրն. Բագրատ Նալբանդյանին և նրանց դստերը, ովքեր խոշտանգվել և շատ դաժան վերաբերմունքի էին ենթարկվել ոստիկանական մարմինների կողմից: Այդ անձինք նշել էին, որ խոշտանգման նպատակն է եղել նրանց ստիպել, որպեսզի ընդունեն դստեր դասընկերուհիներից մեկին սպանելու մեղադրանքը: Գործը լուսաբանվել էր Ոստիկանության հեռուստաձայնագրով և թերթով այն ժամանակ, երբ դեռ ընթանում էր նախաքննությունը, որով խախտվել էր անմեղության կանխավարկածի սկզբունքը: Հրապարակայնության պատճառով Նալբանդյանների ընտանիքը պորբեմներ էր ունեցել սեփական քաղաքում և դպրոցում, և նրանք ստիպված էին եղել հեռանալ: Եվրոպական դատարանը 2015 թվականի հունիսի 30-ի դատավճռով պետությանը կարգադրեց գանգատաբերներին վճարել 72,100 եվրո:

25 Տե՛ս *Global gender gap report*. World Economic Forum, 2016:
26 “Armenia”, առկա է համացանցում <http://www.ipu.org/wmn-e/classif.htm>, դիտվել 2017 թ. հունվարի 17-ին:

Եվրոպայի խորհրդի թիրախային 40%-ի ցուցանիշից²⁷ և Գենդերային քաղաքականության ռազմավարական գործողությունների ծրագրով նախատեսված 30%-ի նվազագույն ցուցանիշից: 2012 թվականի ընտրություններում ազգային օրենսդրությամբ պահանջվում էր, որպեսզի կուսակցական ցանկերում ներառված թեկնածուների 20%-ը կանայք լինեն: Այդ պահանջը բարձրացվել էր 2007 թվականի համեմատ, երբ թեկնածուների ընդամենը 15%-ը պետք է կանայք լինեին: Չնայած կին թեկնածուների մասնաբաժինը 5 տոկոսային կետով բարձրացնելու վերաբերյալ իրավական պահանջին, կին թեկնածուների փաստացի մասնաբաժինն աճեց 1 տոկոսային կետից պակաս չափով՝ 2007 թվականի 22.6%-ից 2012 թվականին հասնելով ընդամենը 22.9%-ի: Իշխանության գործադիր ճյուղում նույնպես ցածր է կանանց ներկայացվածության մակարդակը: 2015 թվականի տվյալներով, 18 նախարարներից 3-ն էին կանայք, 60 փոխնախարարներից՝ 7-ը: Ինչ վերաբերում է պետական և տեղական ինքնակառավարման մակարդակներին, ապա չկան կին մարզպետներ (10 մարզերից և ոչ մեկում), իսկ փոխմարզպետներից ընդամենը մեկն է կին: 21 քաղաքապետների թվում չկան կանայք, իսկ 51 փոխքաղաքապետներից ընդամենը մեկն է կին:²⁸

Ավելին, կանանց վերապահվող նախարարությունների տեսակները նրանց կապակցում են հասարակությունում ավանդաբար նրանց կողմից կատարվող սոցիալ-մշակութային դերերի հետ: Քաղաքական մշակույթն ընդհանուր առմամբ բացասական ընկալում ունի, և քաղաքական դաշտն համարվում է սահմանափակ թվով մարդկանց՝ կանանց և տղամարդկանց տիրույթ, ովքեր պարտավոր են ընդունել այնպիսի գործելակերպ, որին կանայք հնարավոր է չցանկանան մասնակից լինել: Հետևանքն այն է, որ կանայք հաճախ նախընտրում են քաղաքականության փոխարեն զբաղվել քաղաքացիական հասարակության շրջանակում ակտիվիստական գործունեությամբ: Կանանց և քաղաքականության վերաբերյալ ուսումնասիրությունները, ներառյալ՝ Երևանի պետական համալսարանի Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի կողմից իրականացվածները, արտացոլում են քաղաքական պաշտոն ստանալու և քաղաքական իշխանություն իրականացնելու ցանկություն ունեցող կանանց ճանապարհին հանդիպող խոչընդոտները՝ եզրակացնելով, որ խնդրի խորքային պատճառն Հայաստանի հայրապետական, սոցիալական և մշակութային արժեհամակարգն է:²⁹ Տղամարդիկ կասկածամտորեն են վերաբերվում պաշտոնի առաջադրվելու կամ արդյունավետ որոշումներ կայացնելու և հիմնականում տղամարդկանցից բաղկացած աշխատակազմը ղեկավարելու՝ կանանց ունակությանը:

Կանանց քաղաքական ակտիվությունը խաթարող գործոններից են, ի թիվս այլոց, ընտանեկան կյանքում տիրող հայրապետական արժեքներ,³⁰ քաղաքականության մեջ կանանց մասնակցության աստիճանի բարձրացման նկատմամբ հանրության լայն շրջանակների ոչ բավարար հասարակական պահանջարկը, կանանց սահմանափակ ֆինանսական անվտանգությունը և անկախությունը, ինչպես նաև հայաստանաբնակ կանանց մեծ մասի ոչ բավարար հետաքրքրվածությունը՝ մասնակցելու հանրային որոշումների կայացմանը:

Կանանց պարագայում ավանդական ընտանեկան արժեքները մեծապես գերադասվել են իրավունքի գերակայությանը՝ թե՛ սկզբունքային, թե՛ գործնական հարթություններում: Հետևաբար, անհրաժեշտ է լրացուցիչ թափ հաղորդել կառավարության, ՀԿ-ների և միջազգային հանրության ջանքերին՝ ուղղված Հայաստանում կանանց քաղաքական մասնակցության ավելացմանը, դպրոցներում գենդերազգայուն կրթական ծրագրերի մշակմանը և պետական և համայնքային կառույցների համար հատուկ ուսուցումների կազմակերպմանը:

27 Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec (2003)3 հանձնարարականը քաղաքական և հանրային որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշիռ մասնակցության մասին:

28 «Քաղաքացիական հասարակության մոնիթորինգի վերաբերյալ պետության 2013 թվականի զեկույց», նախնական տեքստ:

29 «Հայաստանի Հանրապետությունում կանանց քաղաքական մասնակցության խթանումը. առկա նախաձեռնությունները, հիմնախնդիրները և հեռանկարները», Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն, ԱՄՆ ՄԶԳ-ի զեկույց, Երևանի պետական համալսարան, 2015 թ.:

30 Նույն տեղը:

Գեներային հավասարակշռությունը դատական համակարգում

Դատավորների լրակազմում և դատական համակարգի վարչարարական պաշտոններում երկու սեռերի հավասար ներկայացվածությունը կարող է ներազդել դատարանների գեներալազգայնության վրա: Կին դատավորները հասանելի և հասկանալի են դարձնում կանանց կենսափորձը՝ միևնույն ժամանակ առաջ մղելով գեներային հավասարությանն ուղղված ծրագրերը դատական համակարգի ներսում:

Դատական համակարգի որոշումներն ազդում են հանրային և իրավական բանավեճի վրա՝ այդպես էլ ներազդելով հասարակության վրա բոլոր մակարդակներում: Հետևաբար, հույժ կարևոր է, որպեսզի կանայք հավասարապես ներկայացված լինեն դատական համակարգում. ներկայումս կանանց ներկայացվածությունը դատավորների շրջանում 23% է: Այնուամենայնիվ, բոլոր դատարանների և բոլոր պալատների նախագահները տղամարդիկ են:

Եվրոպայի խորհրդի 2014 թվականի տվյալները վկայում են, որ առաջին ատյանի դատավորների 78%-ը և երկրորդ ատյանի դատավորների 69%-ը տղամարդիկ են: Հայաստանի բարձրագույն դատարանի անդամների 82%-ը տղամարդիկ են (Եվրոպայի խորհուրդ, Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով, 2016 թ.):

Կանանց համար արդարադատության մատչելիության հաջորդ ինստիտուցիոնալ խոչընդոտը՝ կապված դատական համակարգում տղամարդկանց գերակա դիրքերի հետ, այն է, որ աշխատողները կարող են չունենալ պատշաճ վերապատրաստում գեներալազգային իրավիճակների հանգուցալուծման վերաբերյալ, ինչպես նաև՝ այն փաստը, որ տուժողներն հաճախ վտանգում են իրենց կյանքը՝ դատարանում ցուցմունք տալով իրենց նկատմամբ տեղի ունեցած բռնության և իրավունքների խախտումների մասին: Դա նշանակում է, որ դատախազները, դատավորները կամ ոստիկանները որոշ դեպքերում կին տուժողների հետ աշխատելիս դատարանում բավարար զգայնություն չեն ցուցաբերում նրանց վերապրած հոգեբանական ցավի և տառապանքի նկատմամբ:

Հայաստանում որոշ դատավորներ և իրավապահ մարմինների որոշ ծառայողներ ժամանակ առ ժամանակ գեներային հավասարության հարցերի շուրջ վերապատրաստվում են միջազգային կազմակերպությունների կողմից: Այնուամենայնիվ, չկան համակարգված և կուտակված արժանահավատ տվյալներ կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ, որոնք կօգնեին որոշումներ կայացնողներին իշխանության բոլոր ճյուղերում (գործադիր, օրենսդիր և դատական), կապահովեին թափանցիկությունը և կքաջալերեին գիտական շրջանակներին և քաղաքացիական հասարակությանը՝ ավելի ակտիվորեն մասնակցելու արդարադատության ավելի լավ համակարգի կայացմանը, որն առավել արդյունավետ կլինի և կհարմարվի հայ հասարակության փոփոխվող կարիքներին:

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության դատախազական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով պարտադիր վերապատրաստում է նախատեսված դատավորների և իրավապահ մարմիններում ծառայողների համար՝ գեներային հավասարության բնագավառում նրանց մասնագիտացած գիտելիքների շարունակական բարելավման նպատակով, որը կարգավորվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով:

4. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՀԱՋՈՂԱԾ ՓՈՐՁԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանանց համար արդարադատության հավասար մատչելիության ապահովման հաջողված ներպետական փորձի օրինակներ

Ազգային մակարդակում արձանագրված դրական զարգացումներից կարելի է հիշատակել կրթական համակարգում նախատեսվող՝ գենդերային հավասարության ուսումնական ծրագրի ներդրումը (Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար, 2014 թ., պարբ.107):

Այս համատեքստում շատ կարևոր զարգացում է Իրավաբանական կրթության մասին Հայաստանի Հանրապետության նոր հայեցակարգը հաստատելու մասին կառավարության որոշումը (ընդունվել է 2015 թվականի օգոստոսին): Դրանով նախատեսվում է բարելավել իրավաբանական կրթության համակարգը և բարեփոխել իրավաբանական մասնագիտության զարգացման գործընթացը: Այս ռազմավարությունն հատկապես կարևոր է, քանի որ դրանով նախատեսվում է նախադպրոցական հաստատություններում, միջնակարգ և ավագ դպրոցներում և բարձրագույն կրթության համակարգում ակնկալվող բարեփոխումների բազմաշերտ համակարգ: Հատուկ գուլիս կա՝ նվիրված ՉԼՍ-ների հետ աշխատանքին: Այսպիսով, նշված փաստաթուղթը կենսական կարևորություն ունի հայ հասարակությունում իրավական գիտելիքի տարածման և ամրապնդման տեսակետից: Ըստ այդմ, Կառավարությունը գործողությունների հատուկ ծրագրի մշակումն հանձնարարել է Արդարադատության նախարարությանը և Կրթության և գիտության նախարարությանը:

Այնուհանդերձ, տվյալ փաստաթուղթը չի պարունակում կոնկրետ դրույթներ կանանց իրավական կրթության և իրավական գրագիտության վերաբերյալ: Այն չի պարունակում կանանց կրթությանը և ապագա աշխատանքային զբաղվածությանը վերաբերող որևէ դրույթ: Կարևոր է, որպեսզի կանանց կարգավիճակին և իրավունքներին առնչվող միջոցառումներն արտացոլվեն վերոհիշյալ գործողությունների ծրագրում: Այդ դրույթները և դրանց փաստացի իրագործումը կարող են կանանց համար արդարադատության արդյունավետ և հավասար մատչելիության ապահովման լուրջ երաշխիքներ լինել:

2014 թվականին Հայաստանի Դատարանների նախագահների խորհուրդը մշակել և ընդունել է 2015-17 թթ. գործողությունների նոր ծրագիր, որն ուղղված է դատական համակարգում գենդերային հավասարության և գենդերային հավասարակշռության խթանմանը: Այդ ծրագրից բխող հրապարակային միջոցառումներ՝ ներառյալ սեմինարներ են կազմակերպվել Երևանի պետական համալսարանի Իրավաբանական ֆակուլտետի ուսանողների համար, որոնց ընթացքում կին դատավորները ներկայացրել են իրենց փորձը և ուսանողուհիներին խրախուսել, որպեսզի նրանք հավատան սեփական կարողություններին և ձգտեն դատավորի հաջողված կարիերա ունենալ:

Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության ռազմավարության 2011-2015 թթ. գործողությունների ծրագրի շրջանակում քայլեր են ձեռնարկվել գենդերահավասարության խնդիրներին առնչվող նվազագույն գիտելիքի դասավանդման կրթամեթոդաբանական հիմքերը ձևավորելու, ինչպես նաև գիտաուսումնական գրականության գենդերային փորձաքննության և վերանայման չափորոշիչները սահմանելու ուղղությամբ: Գենդերահավասարության թեմաները ներառվել են տարրական դպրոցի ուսուցիչների վերապատրաստման ուսումնական ծրագրերում: Գենդերահավասարության թեմաները ներառվել են «Ես և շրջակա միջավայրը» առարկայի չորրորդ դասարանի դասագրքում: Կազմվել է «Հանդուրժողականության դասավանդումը» վերնագրով ձեռնարկ ուսուցչի համար, որում ներառված են գենդերահավասարության թեմաներ: Հիմնական իրավունքների, գենդերային հավասարության, հանդուրժողության և քաղաքացիական հասարակության թեմատիկ միավորները ներառվել են հասարակագիտության ուսումնական ծրագրերում:

Ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետության Ոստիկանությունը ստեղծել է անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հատուկ ստորաբաժանում: Վերջինս իր տեսակով առաջինն է Անկախ

պետությունների համագործակցության անդամ պետություններում: Այն ուսումնասիրում, վերլուծում և հաշվառում է երեխաների և կանանց նկատմամբ բռնության դեպքերը, ինչպես նաև ընտանեկան բռնության դեպքերը, և օժանդակություն է ցուցաբերում բռնությունից տուժած անձանց:

Հայաստանում կան այլ կառույցներ ևս, մասնավորապես՝ ՀԿ-ներ, որոնք օժանդակություն են ցուցաբերում ընտանեկան բռնություն վերապրած անձանց, պաշտպանում նրանց և օժանդակում հասարակությունում նրանց վերաինտեգրմանը: «Amnesty International» կազմակերպության տվյալներով, վերջին տարիներին բացվել են ընտանեկան բռնության մի քանի թեժ գծեր, կենտրոններ և ապաստարաններ, որոնք ընդամենը մի քանի ամսում փակվել են ֆինանսավորման բացակայության պատճառով: Այնուհանդերձ, որոշ ՀԿ-ներ հաջողված փորձ են արձանագրել երկրում (Եվրոպայի խորհրդի Գեներային հավասարության հանձնաժողով, 2015 թ.): Կանանց օժանդակության կենտրոնը, օրինակ, անվտանգ միջավայր է տրամադրում ընտանեկան բռնությունից տուժած անձանց՝ ներառյալ սոցիալական և բժշկական օգնություն, եթե այն անհրաժեշտ է: «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն իրավաբանական խորհրդատվություն, վերապատրաստումներ և այլ միջոցառումներ է իրականացնում օժանդակելով ընտանեկան բռնությունից տուժած անձանց, և պայքարում է երկրում ընտանեկան բռնության խնդիրների դեմ: Այն ընտանեկան բռնության մի շարք գործեր է վարել՝ փաստաբաններ տրամադրելով տուժողներին, հոգեբանական օժանդակություն ցուցաբերելով տուժողների ընտանիքներին և բարձրացնելով հանրային իրազեկությունն այդ գործերի վերաբերյալ: Ավելին, թեպետ իշխանություններն օժանդակություն չեն ցուցաբերել բռնությունից տուժած կանանց, Կանանց օժանդակության խմբի հանդիպումների արդյունքում որոշակի հնարավորություններ են ընձեռվել տուժողների առնվազն որոշ մասին (Եվրոպայի խորհրդի Գեներային հավասարության հանձնաժողով, 2015 թ.):

Թեպետ ընտանեկան բռնությունից տուժած անձանց օժանդակություն և աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ ՀԿ-ների գործունեությունը ողջունելի է կանանց իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկությունը բարձրացնելու և համակարգային փոփոխություն ջատագովելու տեսանկյունից, պետությունն է կրում ընտանեկան բռնությունից պաշտպանություն տրամադրելու պարտավորությունը:³¹ Այս առումով, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարն Հայաստանի իշխանություններին կոչ է արել օժանդակություն ցուցաբերել ընտանեկան բռնությունից տուժած անձանց ապաստարաններին և իրականացնել Գեներային բռնության դեմ պայքարի գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները:

Կանանց համար արդարադատության մատչելիության բարձրացման առկա մեխանիզմները

Հայաստանում գոյություն ունեն կանանց համար արդարադատության մատչելիության բարձրացման մի շարք մեխանիզմներ:

Կանանց համար արդարադատության մատչելիության բարձրացման կարևոր միջոց է իրավաբանների վերապատրաստումը: Արդարադատության ակադեմիան, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության դատախարակական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի շրջանակում, որը հաստատվել է Նախագահի կողմից,³² նախնական և շարունակական ուսուցում է կազմակերպում դատական և դատախազական համակարգերում աշխատողների համար:

Ուսումնական մյուս հաստատությունը Փաստաբանների դպրոցն է, որը մասնագիտական ուսուցում և որակավորման քննություններ է կազմակերպում ունկնդիրների համար՝ միևնույն ժամանակ նաև մասնագիտական վերապատրաստման դասընթացներ կազմակերպելով փաստաբանների համար:

31 Ստամբուլյան կոնվենցիայով նախատեսվում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի համապարփակ հայեցակարգ Մասնակից պետությունների համար, որում համադրված են կանխարգելումը, պաշտպանությունը, հետապնդումը և համարժեք ծառայությունների մատուցումը:

32 Տե՛ս <http://www.arlis.am/documentview.aspx?docID=87218>, դիտվել է 2016 թ. նոյեմբերի 28-ին:

Այնուհանդերձ, թե՛ Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիան, թե՛ Փաստաբանների դպրոցն իրենց ուսումնական ծրագրերում ներկայումս չունեն գենդերային հավասարության ծրագրեր: Թեպետ Ակադեմիան ներդրել է կանանց իրավունքներին առնչվող որոշ թեմաներ, օրինակ՝ դատախազների համար կազմակերպվող կրիմինալիստիկայի վերապատրաստման դասընթացը, որում հատուկ ուշադրություն է դարձվում խոցելի տուժողների և վկաների հարցաքննությանը, դատավորների, դատախազների և քննիչների համար չկան կանանց համար արդարադատության մատչելիության և ընդհանրապես գենդերային հավասարության մասնագիտացված դասընթացներ կամ համապարփակ ուղեցույցներ:

Ուստի, իշխանություններին խորհուրդ է տրվում հատուկ ուշադրություն դարձնել դատավորների և իրավապահ մարմիններում ծառայողների պարտադիր դասընթացներում գենդերային թեմայի ներառմանը՝ գենդերային հավասարության ազգային ռազմավարությանը համահունչ: Ավելին, ընտանեկան բռնության և խտրականության դեմ պայքարի ոլորտում սպասվող օրենսդրական փոփոխությունները և Ստամբուլյան կոնվենցիայի ակնկալվող վավերացումը լուրջ հիմքեր են ընձեռում Արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագիրը փոփոխելու համար: Կարևոր է նաև ապահովել բոլոր ատյաններում դատավորների թվաքանակի գենդերային հավասարակշռվածությունը:

2003 թվականին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքի ընդունմամբ փաստացի հաստատվեց երկրում մարդու իրավունքների պաշտպանության ազգային արտադատական կառույցի ստեղծումը: Մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսանձը) ինքնուրույն և անկախ պաշտոնյա է, ով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան իրականացնում է մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանությունը պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտումների դեպքում: Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը 2006 թվականին ստացել է «Ա» կարգավիճակ, որը նշանակում է, որ այն համապատասխանում է Փարիզյան սկզբունքներին:

2008 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ճանաչվել է Կանխարգելման ազգային մեխանիզմ հոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ պայքարի կոնվենցիայի կամընտիր արձանագրության ներքո:

Որպես Կանխարգելման ազգային մեխանիզմ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը մշտադիտարկում է իրականացնում քրեակատարողական հիմնարկներում, ներառյալ՝ կանանց և երեխաների համար նախատեսված «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում:³³ Ավելին, ՄԻՊ-ի աշխատակազմն իրավունք ունի նաև մշտադիտարկման ենթարկել դռնբաց դատավարությունները՝ դատական նիստերում մարդու իրավունքների խախտումներ արձանագրելու նպատակով: Օգտագործելով իրեն վերապահված այդ լուրջ գործիքները՝ ՄԻՊ-ի աշխատակազմը մի շարք նոր նախաձեռնություններ է ստանձնել՝ նպատակ ունենալով ներգրավել ընտանեկան բռնության կանխարգելմանը և տուժողների պաշտպանությանը: Այդպես ՄԻՊ-ի աշխատակազմը կկարողանա արժանահավատ տվյալներ ստանալ և վերլուծություններ իրականացնել՝ առաջարկություններ ներկայացնելով Հայաստանի արդարադատության համակարգի հետագա բարելավման վերաբերյալ: Այս առումով, սակայն, կարևոր է զարգացնել ՄԻՊ-ի աշխատակազմի կարողությունները՝ արդյունավետ և արդյունավոր գործունեության միջոցով ազգային մակարդակում քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար:

Հայաստանի Հանրապետության Ոստիկանությունը մի շարք միջոցներ է ձեռնարկել կանանց նկատմամբ բռնության՝ ներառյալ ընտանեկան բռնության հիմնախնդրի լուծումները բարելավելու ուղղությամբ: Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ վիճակագրական տվյալների՝ ներառյալ ներկայացված բողոքների և դատարան ուղարկված գործերի թվի վերաբերյալ տվյալների հավաքագրումը կարևոր քայլ է: Ոստիկանությունը նաև վերապատրաստման դասընթաց է կազմակերպել ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու թեմայով և հանրային իրազեկման տարբեր

³³ Հայաստանի այն քրեակատարողական հիմնարկը, որում պահվում են կալանավորված և/կամ դատապարտված կանայք և անչափահասները, կոչվում է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ:

ծրագրեր իրականացրել՝ ներառյալ ծրագրեր երկրի տարբեր շրջաններում գործող դպրոցներում: Ոստիկանությունում ստեղծված նոր ստորաբաժանումը զբաղվում է կանանց և երեխաների նկատմամբ բռնության խնդիրներով: Արդյունքում ավելացել է հաղորդումների և դատարան ուղարկվող գործերի թիվը, սակայն հարկ է նշել, որ անհրաժեշտ է ավելացնել հանրային կրթության ծրագրերը: Բացի դրանից, շարունակվում են ոստիկանությունում կանանց թիվն ավելացնելուն ուղղված ջանքերը, մասնավորապես՝ ավելի մեծ թվով կանանց ընդունելով Ոստիկանության կրթահամալիր:

Ինչպես նշել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը, տղամարդիկ նույնպես պետք է ավելի մեծ դերակատարում ունեն կանանց նկատմամբ բռնության և խտրականության դեմ պայքարում: «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնած «Տղամարդիկ ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» ցանցը դրական քայլ է այս ուղղությամբ: Եվ թեպետ քաղաքացիական հասարակության մասնակցությունը ողջունելի է, վերջին հաշվով պետությունն է կրում մարդու իրավունքները և գենդերային հավասարությունն ապահովելու իր հանձնառությունները կատարելու պարտավորությունը: Ինչպես եզրակացնում է Օրենսդրության մեջ և պրակտիկայում կանանց նկատմամբ խտրականության հարցով ՄԱԿ-ի աշխատանքային խումբը, «կանանց համար հավասարության երաշխիքների արդյունավետ կատարումն հնարավոր չէ շարունակել առանց կյանքի բոլոր ոլորտներում կանանց դերի իրական բարձրացման»:³⁴

Ավելին, Հայաստանի Հանրապետության Դատարանների նախագահների խորհուրդը մշակել և հաստատել է 2015-2017 թթ. իր հիմնական գործողությունների ծրագիրը, որն ուղղված է Հայաստանի դատական համակարգում գենդերային հավասարության և գենդերային հավասարակշռության խթանմանը: Մեկնարկել է դատական համակարգում գենդերային հավասարության գործողությունների ծրագրի մշակումը:

2015 թվականի հունիսին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է օրենսդրական կարևոր փոփոխություններ Քրեական օրենսգրքում (փոփոխություններն արդեն ուժի մեջ են մտել): Դրանց հիմնական նպատակներից է բռնությունից կանանց պաշտպանությունը բարելավելը, ինչպես նաև ավելի արդյունավետ և արդյունավոր պայքարն ընդդեմ կանանց նկատմամբ բռնության: Նախքան 2015 թվականը գործած Քրեական օրենսգրքի համաձայն, ծանր ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը՝ ներառյալ կանանց նկատմամբ, 119-րդ հոդվածի համաձայն համարվում էր մասնավոր մեղադրանքի գործ: Դա նշանակում էր, որ քրեական հետապնդում կարող էր հարուցվել միայն տուժողի կողմից իրավապահ մարմիններին համապատասխան բողոք ներկայացնելու դեպքում: Ավելին, եթե այսօրինակ բռնությունից տուժողը ցանկություն էր հայտնում հաշտվել ենթադրյալ բռնարարի հետ, քրեական գործը կարճվում էր: Այլ կերպ ասած, նման գործերով քրեական հետապնդումն ամբողջովին կախված էր տուժողի բողոքից: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նոր փոփոխությունների համաձայն, այսպիսի գործերը կախված չեն լինի բացառապես տուժողի բողոքի առկայությունից. այժմ արդեն դրանք համարվում են հանրային մեղադրանքի գործեր: Դատախազները պարտավոր են քրեական հետապնդում իրականացնել՝ անկախ քրեական հետապնդում իրականացնելու՝ տուժողի ցանկությունից: Այսպիսով, նոր փոփոխությունների նպատակն է ապահովել արդարադատության մատչելիությունը կանանց համար՝ ներառյալ կանանց նկատմամբ բռնության գործերով:³⁵

Հաջորդ կարևոր առաջխաղացումն այն փաստի գիտակցումն է, որ ժողովրդավարության որակը կախված է կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությունից: Դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության «Հանրային ծառայության մասին» օրենքով, որն ընդունվել է 2012 թվականին (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի՝ Համընդհանուր պարբերական գնահատման հարցերով աշխատանքային խումբ, 2015 թ.): Հայաստանը փորձել է շտկել քաղաքական կյանքում և աշխատաշուկայում

34 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա (2012 թ.), Օրենսդրության մեջ և պրակտիկայում կանանց նկատմամբ խտրականության հարցով աշխատանքային խմբի զեկույց, A/HRC/20/28 (2012), պարբ. 14:

35 Այս փոփոխություններն ընդունվել են հիմնականում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նախադեպային պրակտիկայի հիման վրա, որի նպատակն է կանանց պաշտպանել բռնությունից և կանխել ընտանեկան բռնությունը: Մասնավորապես, հանգրվանային դատական նախադեպը՝ *Opuz-ը ընդդեմ Թուրքիայի* գործը, ընդունվել է որպես հիմք այս փոփոխության համար. ընտանեկան բռնության այդ գործով Թուրքիայի դատական համակարգը չէր ապահովել համարժեք արձագանք:

կանանց թերևերկայացվածության խնդիրը՝ սահմանելով գենդերային քվոտաներ և աշխատաշուկայում գենդերային հավասարության ազգային ծրագիր:

Հայաստանում Եվրամիության պատվիրակության հետ համատեղ իրականացվող՝ Բյուջետային օժանդակության ծրագիրը նույնպես աջակցում է այս ոլորտում զարգացումներին: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրն հաստատելու մասին Նախագահի կարգադրության իրականացմանը: Կարգադրության պահանջներից մեկը վերաբերում է դատական համակարգում կանանց մասնակցության ավելացմանը: Մասնավորապես, պահանջվում է, որպեսզի դատավորի թեկնածուների միջև գենդերային հավասարակշռության խթանման գործողությունների ծրագիր հաստատվի դատական համակարգի ինքնակառավարման մարմնի, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի, կամ նոր Սահմանադրության համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Հիմնվելով այդ պահանջի վրա, Հայաստանի Դատարանների Նախագահների խորհուրդը մշակել և 2015-17 թվականների համար ընդունել է հետևյալ հիմնական գործողությունները, որոնք ուղղված են Հայաստանի դատական համակարգում գենդերային հավասարության և գենդերային հավասարակշռության խթանմանը.

- Մշտադիտարկում նպատակ ունենալով պարզել սոցիալական տարբեր խմբերում դատական համակարգի գենդերահավասարության վերաբերյալ ներկայիս կարծիքները և մոտեցումները,
- Աշխատանքային խմբի ստեղծում նպատակ ունենալով ամփոփել մշտադիտարկման արդյունքները, վերլուծել միջազգային փորձը և մշակել վերապատրաստման նյութեր և վերապատրաստման թեմատիկ ծրագրեր, որոնք կբխեն մշտադիտարկման արդյունքներից,
- Ամառային դպրոցի կազմակերպում,
- Համագործակցության Նախաձեռնում Արդարադատության ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի/փաստաբանների դպրոցի, բուհերի, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով իրագործել Գործողությունների ծրագրի նպատակները,
- Հանդիպումներ ավագ դպրոցի սովորողների հետ (դասարանային այցեր, քննարկումներ, դերախաղ և այլն),
- Աշխատանքային հանդիպումներ (քննարկումներ, կլոր սեղաններ, դասընթացներ և այլն) պետական և ոչ պետական մարմինների և կազմակերպությունների մասնակցությամբ,
- Իրականացվող աշխատանքների վերաբերյալ համապարփակ տեղեկատվության պարբերական հրապարակում:

Կարելի է եզրակացնել, որ ազգային և միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ Հայաստանում ձևավորվել է կանանց համար արդարադատության մատչելիության բարձրացման ինստիտուցիոնալ համակարգ: Այնուհանդերձ, երկրում անհրաժեշտ է համապարփակ մոտեցում արդարադատության և իրավունքի գերակայության նկատմամբ: Այն պետք է ընդգրկի արդարադատության ողջ շղթան՝ ներառյալ ոստիկաններին, փաստաբաններին, դատախազներին, դատավորներին և քրեակատարողական ծառայողներին, նպատակ ունենալով հաղթահարել համակարգում առկա սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային բոլոր խոչընդոտները:

Կանանց համար արդարադատության հավասար մատչելիությունը խոչընդոտող հանգամանքների հաղթահարման վերաբերյալ առաջարկություններ

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առաջարկվում է.

- Ստորագրել և վավերացնել Ստամբուլյան կոնվենցիան ավելի վաղ, քան նախատեսվել է ԵՄ-Հայաստան բյուջետային օժանդակության ծրագրով, այսինքն՝ 2017 տարեվերջին,
- Ընտանեկան բռնության մասին օրենքի նախագիծն հրատապ կարգով քննարկման առարկա դարձնել հանրության լայն շրջանակների համար՝ նախքան օրենքի ընդունումը, և ընտանեկան բռնության մասին օրենքը մշակելիս ապահովել դրա համապատասխանությունը Ստամբուլյան կոնվենցիային,
- Ապահովել խտրականության դեմ պայքարի մասին օրենքի նախագծի համապատասխանությունը պետության հանձնառությունների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների տված առաջարկություններին,
- Խտրականության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային իրավական դաշտի մեջ սպասվող փոփոխությունների, ինչպես նաև՝ Ստամբուլյան կոնվենցիայի հնարավոր վավերացման լույսի ներքո.
 - Դատավորներին, ոստիկաններին և դատախազներին վերապատրաստել գենդերային հավասարության՝ ներառյալ «գենդեր» եզրույթի թեմայով: Դա կնպաստի գենդերի հասկացության նկատմամբ բացասական դիրքորոշումների վերացմանը: Արդարադատության և իրավապահ համակարգում աշխատողները պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան կանոնավոր կերպով զբաղվել կանանց կամ բռնությունից տուժած կանանց առնչվող գործերով՝ ապահովելով կանանց իրավունքներին առնչվող օրենքների և սկզբունքների պատշաճ կիրառությունը,
 - Պատրաստել պարտադիր դասընթացներ/վերապատրաստման հատուկ դասընթացներ դատախազների, դատավորների և քննիչների համար, որոնք կներառվեն Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրերում: Ուսումնական նյութը պետք է հիմնված լինի խտրականության և բռնության դեմ պայքարի և կանանց իրավունքների պաշտպանության եվրոպական և միջազգային չափանիշների վրա, ինչպես նաև ներառի ազգային օրենսդրությունը, մասնավորապես՝ կիրառելի օրենսգրքերի համապատասխան դրույթները: Պետք է հաշվի առնել հատկապես անձնական կյանքի իրավունքը, դատավորի և դատախազի էթիկայի նորմերը, կրիմինալիստիկայի, կրիմինոլոգիայի, վիկտիմոլոգիայի, դատական փորձաքննության սկզբունքները, ընտանեկան օրենսդրությունը և ՉԼՄ-ների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Ինչ վերաբերում է դատական պրակտիկային և դատավարություններին, ապա ուսումնական նյութերում անհրաժեշտ է ներառել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան և CEDAW-ի թիվ 33 հանձնարարականը (Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով, 2015b),
 - Ներդրումներ կատարել այնպիսի դասընթացների մեջ, որոնց կներգրավվեն կին դատավորներ, դատախազներ և քննիչներ, հատկապես անդրադառնալով բռնության այն գործերին, որոնցում տուժողները կանայք են: Անհրաժեշտ է, մասնավորապես, զարգացնել դատավորների, դատախազների և քննիչների՝ խտրականությունից և կարծրատիպերից զերծ մտածողությունը: Նրանք պետք է հմտորեն տիրապետեն այն մեթոդներին, որոնք հնարավորություն կընձեռեն արդյունավետորեն քննել գործերը, որոնցով տուժողները կանայք են, միևնույն ժամանակ խուսափելով կրկնազոհացման վտանգից,
- Մշակել կանանց իրավունքներին և պաշտպանությանը վերաբերող ուղենիշներ, հատկապես՝ արդարադատության համակարգի համար, ինչպես նաև՝ կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ: Ուղենիշները պետք է ներառեն ժամանակակից դատական պրակտիկայի՝ միջազգային փորձի մեջ առկա լավագույն օրինակները,
- Գենդերազգայնության բարձրացման դասընթացներ ներառել Փաստաբանների դպրոցի ուսումնական ծրագրում՝ անդրադառնալով միջազգային իրավունքի և ստանդարտների կիրառելիությանը, գիտելիքներ տալով կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի (CEDAW)

վերաբերյալ և կատարելագործելով վերջինիս սկզբունքները կատարելու՝ պետության պարտավորությունների վերաբերյալ պատկերացումները,

- Չարգացնել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման կարողությունները և ընդլայնել նրա աշխատանքը՝ ընդգրկելով նաև մարզերը, որպեսզի բարելավվի բռնության կանխարգելումը և կանանց իրավունքների պաշտպանությունը: Այն պետք է ի գործ լինի կատարել կանխարգելման ազգային մեխանիզմի իր գործառույթները՝ հատկապես քրեակատարողական հիմնարկներ՝ ներառյալ կանանց և անչափահասների հիմնարկներ կատարվող մշտադիտարկման այցերի շրջանակում,
- Գենդերային քաղաքականության բարելավման և գենդերային հավասարության խթանման լրացուցիչ առաջարկություններն են.
 - Իրականացման արդյունավետ մեխանիզմներ սահմանել Գենդերային ռազմավարության գործողությունների ծրագրերը մշտադիտարկելու համար,
 - Հետևալ Գենդերային ռազմավարության գործողությունների ծրագրերը համակարգելու և կառավարելու վերաբերյալ մարդու իրավունքների միջազգային կառույցների հանձնարարականներին,
 - Ավագ դպրոցներում և համալսարաններում ներդնել պարտադիր դասընթաց, հաղթահարել գենդերային կարծրատիպերը և հատկապես կանխել կանանց նկատմամբ բռնությունը,
 - Մասնակցել ՉԼՄ-ների համար գենդերահավասարության քաղաքականությունների մշակմանը,
 - Ռեսուրսներ և ծրագրեր տրամադրել կանանց լրատվական գրագիտության բարելավման համար, մասնավորապես՝ լրատվական տեխնոլոգիաների մեջ տեղեկությունները և նյութը մշակելու, օգտագործելու և կառավարելու համար,
 - Օժանդակել գենդերային հետազոտությունների պետական և ոչ պետական կենտրոնների (օրինակ՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի) գործունեությանը՝ գենդերային գիտելիքներ տարածելու և հանրության իրազեկությունը բարձրացնելու նպատակով,
 - Համադրել և պարբերաբար հրապարակել համակարգված և կուտակային տվյալներ կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ: Այս առումով արդարադատության և իրավապահ համակարգի բոլոր կառույցների (օրինակ՝ դատարանների և ոստիկանության) համար առաջին և կարևորագույն քայլը սեռերի բացվածքով տվյալների հավաքագրումն է: Դա կօգնի տվյալների արժանահավատության ապահովմանը, իշխանության բոլոր ճյուղերում որոշումներ կայացնողների կողմից իրականացվող վերլուծություններին, կապահովի թափանցիկությունը և կխրախուսի գիտական շրջանակներին և քաղաքացիական հասարակությանը՝ առավել ակտիվորեն մասնակցելու արդարադատության ավելի լավ, ավելի արդյունավետ և հայ հասարակության փոփոխվող կարիքներին հարմարեցված համակարգի կայացմանը,
 - ՉԼՄ-ներից հաշվետու գործելակերպ պահանջել գենդերային կարծրատիպերի և անհավասարության դեմ պայքարի՝ նրանց դերը կատարելու գործընթացում,
 - Աջակցել կանանց քաղաքական և հանրային մասնակցության բարձրացմանն ուղղված միջոցառումներին,
 - Պետական բյուջեում առաջնահերթություն դարձնել գենդերահավասարության ծրագրերը:

Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման գործընթացում կարևորագույն սուբյեկտների դերերի քարտեզագրում

- Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,

- Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիա,
- Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ,
- Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն,
- Հայաստանի Հանրապետության ոստիկանություն,
- Հայաստանի Հանրապետության քննչական մարմիններ,
- Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ,
- Տեղական ՀԿ-ներ և միջազգային հանրություն,
- Միջազգային և ազգային անկախ փորձագետներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՄԱԿ

Համալսարանական կրթությամբ կանանց հայկական ասոցիացիա (2014 թ.), «2009-2012 թվականներին Հայաստանի Հանրապետությունում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ճևերի վերացման մասին կոնվենցիայի կատարման այլընտրանքային գեկույց», առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <http://www.un.am/up/file/CEDAW%20Alternative%20Report%202009-2012.pdf>, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Եվրոպայի խորհուրդ (2002 թ.), Նախարարների կոմիտեի թիվ Rec(2002)5 հանձնարարականը կանանց բռնությունից պաշտպանելու վերաբերյալ:

Եվրոպայի խորհուրդ (2002 թ.), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1582 (2002) հանձնարարականը կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ:

Եվրոպայի խորհուրդ (2002 թ.), Նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)3 հանձնարարականը քաղաքական և որոշումների կայացմանը կանանց և տղամարդկանց հավասարակշիռ մասնակցության մասին:

Եվրոպայի խորհուրդ (2007), Նախարարների կոմիտեի թիվ Rec(2007)17 հանձնարարականն անդամ պետություններին գենդերային հավասարության ստանդարտների և մեխանիզմների մասին:

Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան (2009 թ.), *Opuz-ն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 33401/02, 9 հունիս, 2009 թ.:

Եվրոպայի խորհուրդ (2011 թ.), Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա և բացատրական գեկույց, առկա են համացանցում հետևյալ հղմամբ՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900016800d383a>, դիտվել են 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար (2014 թ.), «Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիկսի գեկույցը 2014 թվականի հոկտեմբերի 5-9-ը Հայաստան կատարած այցելությունից հետո», առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2790589&SecMode=1&DocId=2243332&Usage=2>, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության հանձնաժողով (2015 թ.), «Առկա խոչընդոտների սվազեցման և կանանց համար արդարադատության մատչելիության բարձրացման հաջողված փորձի օրինակների հավաքածու», առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680597b12>, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Եվրոպայի խորհուրդ, Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով (2016 թ.), Եվրոպական դատական համակարգերը, արդարադատության արդյունավետությունը և որակը, CEPEJ Studies No. 23, Edition 2016 (2014 data), առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/evaluation/2016/publication/CEPEJ%20Study%2023%20report%20EN%20web.pdf>, դիտվել է 2017 թ. հունվարի 17-ին:

Ի. Ղափլանյան և Ա. Մելիքյան (2015 թ.), «Հայաստանի Հանրապետությունում կանանց քաղաքական մասնակցության խթանումը. առկա նախաձեռնությունները, հիմնախնդիրները և հեռանկարները», Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն, Երևանի պետական համալսարան, Երևան, առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <http://www.y-su.am/files/Anna%20Melikyan%20and%20Irina%20Ghaplanyan.pdf>, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Գորիսի կանանց զարգացման Ռեսուրս կենտրոն հիմնադրամ և այլք (2013 թ.), «Հայաստանի քաղաքացիական հասարակության մոնիթորինգի գեկույցը երկրի կողմից ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 1325 բանաձևի (Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը) կատարման վերաբերյալ:

ILOSTAT-ի տվյալների շտեմարան, պետությունների բնութագրեր, առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ http://www.ilo.org/ilostat/faces/home/statisticaldata/ContryProfileId?_afzLoop=1066327670073434#!%40%40%3F_afzLoop%3D1066327670073434%26_adf.ctrl-state%3D1dkno6do3y_154, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

KANTOR Management Consultants Consortium (2015), “Women in power and decision-making in the Eastern Partnership Countries”, առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ http://eige.europa.eu/sites/default/files/documents/gender_equality_and_decision_making_in_eap_countries_2015_-_report_and_annex_one_file.pdf, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Ա. Կոջոյան և Ա. Գևորգյան (2014 թ.), «Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական հեռուստասերիալներում», Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն, առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <http://www.yasu.am/files/Reserch%20paper%2003.09.2014..pdf>, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն (2011 թ.), «Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության համապետական հարցում», ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիր:

OSAC (2013), Armenia 2013 crime and safety report, առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <http://www.osac.gov/pages/ContentReportDetails.aspx?cid=13747>, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով (2015 թ.), «Թիվ 2054 բանաձևն արդարադատության մատչելիության գործընթացում հավասարության և չխտրականության մասին», առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <http://assembly.coe.int/nw/xml/ERef/Xref-XML2HTML-en.asp?fileid=21753&lang=en>, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

Պրոակտիվ հասարակություն ՀԿ (2011 թ.), «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության հետազոտություն», Երևան, առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ www.osce.org/yerevan/88229?download=true, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողով (2014 թ.), «Ամփոփիչ դիտարկումներ Հայաստանի երկրորդ և երրորդ համակցված պարբերական զեկույցների վերաբերյալ (16 հուլիս)», E/C.12/ARM/CO/2-3:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով (2009 թ.), Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողովի ամփոփիչ դիտարկումները, 43-րդ նստաշրջան, 19 հունվար-6 փետրվար, 2009 թ., CEDAW/C/ARM/CO/4/Rev.1 (2009):

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով (2015 թ.), «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 18-րդ հոդվածի ներքո Մասնակից պետությունների ներկայացրած զեկույցների քննարկումը», Մասնակից պետությունների հիևգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցները, Հայաստան, ներկայացված 2015 թ. մարտի 11 -ին, CEDAW/C/ARM/5-6:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի հանձնաժողով (2015 թ.), «Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ ընդհանուր հանձնարարական», CEDAW/C/GC/33, առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ http://tbineternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/1_Global/CEDAW_C_GC_33_7767_E.pdf, դիտվել է 2016 թ. դեկտեմբերի 13-ին:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի՝ Համընդհանուր պարբերական գնահատման հարցերով աշխատանքային խումբ (2015 թ.), «Աշխատանքային խմբի զեկույցի նախագիծը Հայաստանի համընդհանուր պարբերական գնահատման վերաբերյալ», A/HRC/WG.6/21/L.8 (2015):

Համաշխարհային տնտեսական ֆորում (2016 թ.), «Գենդերային ճեղքվածքի վերաբերյալ համաշխարհային զեկույց», առկա է համացանցում հետևյալ հղմամբ՝ <http://reports.weforum.org/global-gender-gap-report-2016>, դիտվել է 2017 թ. հունվարի 17-ին:

Հայաստանում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտների, իրավական պաշտպանության մեխանիզմների և հաջողված փորձի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի ուսումնասիրություն

Հարցաշար քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.

ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲ.

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՍՏԱՌՈՏ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԻՆ (ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԸ 3 ԷՁ).

1. Ինչպիսի՞ իրավաբանական աջակցություն եք ցուցաբերում կանանց և ի՞նչ հարցերով: [Եթե ունեք տվյալներ Ձեր աջակցությունն ստացող շահառուների թվի վերաբերյալ և բացվածքն ըստ խնդիրների տեսակների և ցուցաբերված աջակցության տեսակների, ապա խնդրում ենք տրամադրել:]
2. Ձեր շահառուներին աջակցելիս ինչպե՞ս եք հարաբերվում Հայաստանի դատական համակարգի/դատարանների հետ: (Դատարանում ներկայացնում եք վստահորդների: Իրականացնում եք դատական նիստերի մշտադիտարկում: Տրամադրում եք *amicus curiae* տեղեկանքներ: Ի՞նչ այլ կապեր ունեք նրանց հետ:)
3. Ձեր շփումների արդյունքում ինչպե՞ս կնկարագրեիք դատավորների վերաբերմունքը գենդերահեն՝ ընտանեկան, սեռական կամ այլ տեսակի բռնությունից տուժած կանանց նկատմամբ: Կարո՞ղ եք բերել կոնկրետ օրինակներ, որոնցով պարզ կդառնա դատավորների վերաբերմունքը գենդերահեն բռնությունից տուժած կանանց նկատմամբ: Կարո՞ղ եք մեզ տրամադրել մեկ կամ երկու կոնկրետ օրինակներ, որոնք վերաբերելի եք համարում Հայաստանում կանանց համար արդարադատության մատչելիության խոչընդոտների, իրավական պաշտպանության մեխանիզմների և հաջողված փորձի վերաբերյալ մեր ուսումնասիրությանը:
4. Կարո՞ղ եք մեզ ներկայացնել դատական որոշումների կամ դատավորների վերաբերմունքի որոշ օրինակներ այլ ոլորտներում, որոնցում կանայք կարող են հանդիպել խոչընդոտների (օրինակ՝ ամուսնալուծություն, երեխայի խնամք):
5. Երախտապարտ կլինեինք, եթե ներկայացնեիք կանանց համար արդարադատության մատչելիության հաջողված փորձի օրինակ՝ կա՛մ Ձեր կազմակերպության աշխատանքային փորձից, կա՛մ որևէ այլ աղբյուրից:
6. Ձեր կարծիքով Հայաստանին անհրաժե՞շտ է հատուկ օրենք գենդերային հավասարության մասին:
7. Անհրաժե՞շտ է ստեղծել գենդերային հարցերով մասնագիտացած կառույց: Եթե այո, ապա ի՞նչ պարտականություններ պետք է Ձեր կարծիքով ունենա այդ կառույցը:

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի առաջատար կազմակերպությունն է մարդու իրավունքների բնագավառում: Այն կազմված է 47 անդամ պետություններից, որոնցից 28-ը Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության համար մշակված միջազգային պայմանագիր է: Անդամ պետություններում Կոնվենցիայի կատարումը վերահսկվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:

www.coe.int

Եվրոպական միությունը տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է Եվրոպական 28 ժողովրդավար պետությունների միջև: Միության նպատակներն են խաղաղությունը, բարեկեցությունը և ազատությունն իր 500 միլիոն քաղաքացիների համար՝ ավելի արդար և անվտանգ աշխարհում: Աշխատանքներ կատարելու նպատակով ԵՄ պետությունները ստեղծել են ԵՄ-ն ղեկավարող և ԵՄ օրենսդրությունն ընդունող մարմիններ: Հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը (որը ներկայացնում է Եվրոպայի բնակիչներին), Եվրոպական միության խորհուրդը (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ համընդհանուր շահերը):

<http://europa.eu>

Partnership for Good Governance Գործընկերություն հանուն լավ կառավարման



EUROPEAN UNION



COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ARM